

ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ
ուսումնագիտական
եւ մանկավարժական հանդէս

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



Հրատարակութիւն
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակի

«Հայ Մանկավարժ»

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս

Հայկական կրթական հաստատութիւններու եւ անոնց հովանաւոր մարմիններու պատասխանատուներուն, հայկական վարժարաններու ուսուցիչ-ուսուցչուհիներուն, դպրոցական հայագիտութեան խնդիրներով հետաքրքրուած գիտական եւ մտաւորական հանրութեան եւ ծնողներու համար

Հրամանով

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին

Պատասխանատու Խմբագիր

Հայր Վարդան վրդ. Գազանձեան

Խմբագրական Կազմ՝

Դոկտ. փրոֆ. Նազիկ Յարութիւնեան (վարիչ երեւանի պետական համալսարանի մակավարժութեան ամպիոնի)

Դոկտ. փրոֆ. Աշոտ Մելքոնեան (տնօրէն Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի պատմութեան կաճառի)

Դոկտ. փրոֆ. Ճուլիէթա Կիլամիրեան (դասախօս Խաչատուր Աբովեանի անուան երեւանի պետական մանկավարժական համալսարանի)

Դոկտ. Լիլիթ Արզումանեան (գրաքննադատ)

Տնօրէն

Վարդան Թաշձեան

Հրատարակիչ

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի

Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակ

«Սուրբ Գրիգոր Նարեկացի» Կեդրոն

Հայ Կաթողիկէ Պատրիարքարան


2078-5605 Ժէիթաուի Պէյրուօ-Լիբանան

Հեռ.: + 961 1 570559

Հեռատիպ: 961 1 570558

Էլ.հասցէ: nareg@armeniancatholic.org

www.armeniancatholic.org



ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս

Հրատարակութիւն
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման
Գրասենեակի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ


Հայ կաթողիկէ պատրիարքարանի Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակը «Հայ մանկավարժ» հանդէսի սոյն համարով կը ներկայացնէ հայոց լեզուի ուսուցման ուղեցոյց-ծրագիր մը, ուղղուած՝ Լիբանանի հայկական վարժարաններու մանկապարտէզի հայոց լեզուի ուսուցիչներուն:

«Հայ մանկավարժ»-ի յաջորդ համարով պիտի ներկայացուի երկրորդ ուղեցոյց-ծրագիրը, որ ուղղուած պիտի ըլլայ մայրենի լեզուի նախակրթարանի դասարաններու ուսուցիչներուն:

Ջոյգ ձեռնարկներուն հեղինակն է Երեւանի Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանի փրոֆեսոր, դոկտ. Ճուլիեթա Կիւլամիրեան: Յարգարժան դոկտորը հեղինակ է աւելի քան 300 գիրքերու, գիտամեթոտական յօդուածներու, մեթոտական ձեռնարկներու եւ դասագիրքերու: Ան մայրենի լեզուի ուսուցման շուրջ 10 դասագիրքեր ստեղծած է սփիւքահայ դպրոցներու համար, ինչպէս նաեւ կատարած է ուսուցիչներու վերապատրաստութեան ծրագիրներ՝ սփիւքի բազմաթիւ կեդրոններու մէջ:

Ձեռնարկներու կազմութեան մասնակից եղան այս նպատակով յառաջացուած Լիբանանի հայ կաթողիկէ վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչներէն բաղկացած աշխատանքային զոյգ խումբերը՝ մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններով:


Սոյն ձեռնարկներու կազմութեան հիմքը հանդիսացաւ դոկտ. Ճուլիեթա Կիւլամիրեանի կողմէ Լիբանանի Հայ կաթողիկէ վարժարաններուն մէջ կատարուած մանկավարժական վերապատրաստութեան ծրագիրը, որ իրականացաւ երկու հանգրուանով, 2011 թուականին, ընդհանուրը 4 ամսուայ տեւողութեամբ: Ծրագրի ընթացքին, դոկտ. Կիւլամիրեան կատարեց ոչ միայն վերապատրաստական աշխատանքներ, այլեւ ուսումնասիրեց Հայ կաթողիկէ վարժարաններուն մէջ հայոց լեզուի ուսուցման պայմանները: Այդ



աշխատանքներուն եւ ուսումնասիրութեան պսակումը հանդիսացան նշեալ ուղեցոյցները, որոնց կազմութեան մեծապէս նպաստեցին վերապատրաստութեան դասընթացքներուն հետեւած ուսուցիչները. անոնք կատարեցին արժէքաւոր դիտարկումներ եւ առաջարկներ, որոնք օգնեցին, որ ուղեցոյցները առաւել համապատասխան ըլլան առկայ պայմաններուն եւ պահանջներուն. այդ պայմաններուն եւ պահանջներուն մեծ մասը հասարակաց բնոյթ ունին ընդհանրապէս լիբանանահայ վարժարաններուն մէջ:

Ընդհանուր այս ծրագիրը կայացաւ բարձր հովանաւորութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին: Ուսուցիչներու վերապատրաստութեան եւ ուղեցոյցներու պատրաստութեան հետ կապուած աշխատանքները համակարգեց Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակի վարիչ Վարդան Թաշճեան: Վերահսկումը կատարեց Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի տնօրէն Հայր Վարդան վարդապետ Գազանճեան: Նշեալ բոլոր աշխատանքներուն իրականացումը կարելի դարձաւ Լիբանանի Հայ կաթողիկէ վարժարաններու տնօրէններու խորհուրդին գործակցութեան շնորհիւ:

Սոյն համարով ներկայացնելով ծրագրի՝ մանկապարտէզի դասարաններուն վերաբերող մասը, կ'ակնկալենք, որ ան ծառայէ լիբանանահայ վարժարաններուն մէջ հայոց լեզուի ուսուցման պայմաններու բարելաման եւ պահանջներու կատարման՝ հանդիսանալով օգտաշատ ուղեցոյց հայերէնի ուսուցիչներուն համար: Ծագիրը օգտագործող ուսուցիչները, անոր գործածութեան լոյսին տակ յառաջ եկած դիտողութիւններով ու առաջարկներով կրնան մեծապէս նպաստել անոր բարելաման գործին, որ պիտի շարունակէ մերը ըլլալ: Կ'ակնկալենք, որ սոյն ծրագիրը ուղեցուցական արժէք ներկայացնէ նաեւ հայկական սփիւռքի մէջ նախադպրոցական համակարգի հայերէնի ուսուցիչներուն համար, հաշուի առնելով այն լայն ընդհանրութիւնները, որոնք գոյութիւն ունին սփիւռքահայ՝ մանաւանդ միջին արեւելեան երկիրներու մէջ գործող հայկական վարժարաններուն մէջ:



Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոն
Դպրոցական հայագիտության զարգացման գրասենեակ

«Նախադպրոցականներու Կրթութեան Ազգային Ծրագիր»

Լիբանանի Հայկական
Վարժարաններու
Մանկապարտէզներուն համար

Հեղինակ՝
Երեւանի Խ. Աբովեանի անուան պետական
մանկավարժական համալսարանի փրոֆեսոր
դոկտ. Ճուլիեթա Կիւլամիրեան

Մասնակցութեամբ՝
Լիբանանի հայ կաթողիկէ վարժարաններու
մանկապարտէզի ուսուցիչներուն



ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՄԷՆԷՆ
ԱՐԴԻԻՆԱԻԷՏ ՊԱՅՄԱՆԸ ԶԱՆՈՒՔ ՍԻՐԵԼՆ Է,
ԱՆՈՆՑ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ ՄՏԱԾԵԼԸ

Նախադպրոցական տարիքի (3-6 տարեկան) երեխաներուն կրթութեան (ուսուցում եւ դաստիարակութիւն) խնդիրները առաւելապէս կը լուծուին մանկապարտէզին մէջ: Անշուշտ, չափազանց կարեւոր է փոքրիկ մարդուն դաստիարակութիւնը ընտանիքին մէջ՝ մօր եւ հօր հովանիին ներքոյ, որ կ'իրականացուի երեխային ծնած օրուէն:

Երեխային կրթութիւնը մանկապարտէզին մէջ կ'ընթանայ ծրագրաւորուած բովանդակութեամբ՝ «ԲՈՂԲՈՋ», «ԿՈԿՈՆ» եւ «ԾԱՂԻԿ» խումբերուն մէջ:

Սոյն ծրագիրը, իր բազմաբնոյթ խնդիրներով, կ'իրականանայ մանկապարտէզին նշուած խումբերուն մէջ, ապահովելով խումբէ խումբ աշխատանքի շարունակականութիւնը:

Ծրագիրը կ'ընդգրկէ հայ հոգեկերտուածքի ձեւաւորումի եւ զարգացումի խնդիրներ՝ հաշուի առնելով ինչպէս ազգային, այնպէս ալ համամարդկային արժէքները:

Այսպէս՝ մանկապարտէզին մէջ երեխաներուն կրթութեան բովանդակութիւնը իր մէջ կ'ընդգրկէ խնդիրներ, որոնք պէտք է նպաստեն երեխայի

1. առողջ եւ երջանիկ մանկութեան ապահովումին,
2. զգայարաններու (տեսողութիւն, լսողութիւն, հոտառութիւն, շօշափելիք) եւ հոգեկան գործընթացներու (ուշադրութիւն, յիշողութիւն, մտածողութիւն, երեւակայութիւն, կամք, զգացումներ) զարգացումին,
3. ընկերային-մշակութային յարաբերութիւններու ձեւաւորումին, ինքնաձանաչումին ու ինքնակողմնորոշումին, սեփական անձին գնահատումին,
4. կենցաղային-աշխատանքային տարրական կարողու-

թիւններուն ձեւաւորումին եւ զարգացումին, «Ես ինքս» տարիքին յատուկ ձգտումներու բաւարարումին,

5. ուսումնական գործունէութեան նախապատրաստումին, կարդալու եւ գրելու տարրական կարողութիւններու ձեւաւորումին:

Այս բոլորի մեթոտապէս ճիշդ կատարումի ճանապարհով ալ կը ձեւաւորուի եւ կը զարգանայ երեխային հայեցի մտածողութիւնը եւ հայու հոգեկերտուածքը:

Մանկապարտէզի «ԲՈՂԲՈՋ», «ԿՈԿՈՆ» եւ «ԾԱՂԻԿ» խումբերու ծրագիրներու ներկայացուած աշխատանքներու բովանդակութիւնը փոխ շաղկապուած են իրարու, կը կազմեն մէկը միւսին շարունակութիւնը: Ծրագրային պահանջներու խորագիրները (այսինքն՝ նպատակները) նոյնն են, սակայն բուն պահանջները խումբէ խումբ կը խորանան եւ կ'ընդարձակուին:


Ծրագիրը չծանրաբեռնելու եւ ծաւալուն չդարձնելու նպատակով խուսափած ենք իւրաքանչիւր խումբի ծրագիրին մէջ նշելու, որ նախորդ խումբին մէջ երեխաներուն ձեռքբերածը պէտք է կրկնուի եւ միայն ատոնց վրայ պէտք է աւելցուի նորը: Մանկապարտէզի որեւէ խումբէ ներս դասաւանդող դաստիարակը պարտաւոր է ծանօթանալ ինչպէս իր դասարանին նախորդող, այնպէս ալ յաջորդող դասարանի ծրագիրներուն եւ բժախնդրօրէն պէտք է իւրացնէ զանոնք: «ԿՈԿՈՆ» խումբին ուսուցչուիին պէտք է ամբողջութեամբ իմանայ թէ՛ «ԲՈՂԲՈՋ», թէ՛ «ԾԱՂԻԿ» խումբերուն ծրագրային նիւթը, որպէսզի որոշէ, թէ երեխաները ինչ սորված են նախորդ տարի, ինչ պէտք է սորվին յաջորդ տարի՝ իր աշխատանքը կառուցելու համար անոնց հիման վրայ:

Մայրենի լեզուի սոյն ծրագիրը չ'ընդգրկեր միայն բառամթերքի հարստացումի, խօսքի զարգացումի եւ կարդալ-գրել սորվեցնելու խնդիրները: Հայոց լեզուի ծրագրային խնդիրներուն իրականացումի ընթացքին կը ձեւաւորուին

հայեցի լեզուամտածողութիւն, հայու հոգեկերտուածք, ազգային եւ համամարդկային անձնային որակներ: Ծրագրային նիւթերու իւրացումի ճամբով կը նախատեսուի իրականացնել նաեւ երեխաներուն հոգեկան գործընթացներու եւ զգայարաններու, անոնց յուզական եւ զգացական ոլորտներու զարգացում: Այս բոլորը կը դիտուին որպէս մտաւորապէս, հոգեպէս եւ ֆիզիքապէս առողջ երեխայի աճի եւ ներդաշնակ զարգացումի գլխաւոր գործօններ:

Ծրագիրին մէջ կը գործածուին **ունակութիւն, կարողութիւն եւ հմտութիւն** եզրաբառերը: Անոնք, ըստ էութեան, կը ներկայացնեն երեխաներու որեւէ գործողութիւն կատարելու բնագաւառին մէջ ձեռք բերած մակարդակները: Եւ այսպէս՝ երբ կը գործածուի որեւէ **ունակութիւն ձեռք բերել** արտայայտութիւնը, կը նշանակէ, որ երեխան տակաւին նոր սկսած է սորվիլ տուեալ գործողութիւնը: Անոր կատարումին կամ իմացութեան մակարդակը կը գտնուի առաջին աստիճանին վրայ. երեխան ընդամէնը ունի, կը դրսեւորէ կամ կը ձգտի կատարել տուեալ յանձնարարութիւնը կամ կը կատարէ՝ թոյլ տալով սխալներ, բացթողումներ: Երեխան այս պարագային տակաւին կարիք ունի դաստիարակի օգնութեան: Կը նշանակէ, որ տակաւին պէտք է աշխատանք, ջանքեր եւ ժամանակ, տուեալ առաջադրանքին կատարումին ձեւը իւրացնելու համար:

Երբ երեխային ձեռքբերումներուն մասին խօսուած ատեն կը գործածուի **կարողութիւն** եզրաբառը, կը նշանակէ, որ խնդիր կը դրուի անոր տուեալ բնագաւառէն ունեցած ունակութիւնը համարել կատարելագործուած կամ պէտք է բարձրացնել մէկ մակարդակով: Ասիկա կը նշանակէ, որ երեխան **կրնայ** կատարել տուեալ գործողութիւնը: Օրինակ, երբ կ'ըսենք, որ երեխան պէտք է ունենայ **կը** մասնիկը եւ է օժանդակ բայը բառին հետ միասին ընթերցելու ունակութիւն, կը նշանակէ, որ ան պէտք է իմանայ այդ մասին եւ պէտք է ձգտի այդպէս կարդալ: Սակայն անկէ



պէտք չէ ակնկալել սահուն ընթերցանութիւն եւ որ ան երբեք պէտք չէ սխալի. այդպէս կարդալու կարողութիւնը նոր կը ձեւատրուի, ուրեմն՝ երեխան **տակաւին կը սորվի**, անոր կարողութիւնը ձեւատրումի ծամբուն վրայ է: Երբ կը գործածուի **պէտք է կարենայ** բառակապակցութիւնը, կը նշանակէ, որ կ'ակնկալուի ոչ անթերի աշխատանք. երեխան երբեմն կրնայ սխալիլ, բացթողումներ թոյլ տալ կամ մոռնալ որոշ կանոններ: Օրինակ, երեխան անծանօթ բնագիրը կրնայ կարդալ՝ որոշ բացթողումներ թոյլ տալով: Այնուամենայնիւ, ան ունի կարդալու կարողութիւն:

Կարողութիւնը **հմտութիւն** կը դառնայ անընդհատ կրկնուող վարժութիւններու ծամբով: Երբ կը նշուի, որ երեխան տողերուն մէջ կողմնորոշուելու հմտութիւն պէտք է ունենայ (գրած ժամանակ), կը նշանակէ ան պէտք է չսխալի երբեւէ կամ գրեթէ պէտք է չսխալի գրած ժամանակ կամ պէտք չէ ելլէ տողին սահմանէն:

Այսպէս, օրինակ, կարդացած ժամանակ **ունակութիւնը** տառերը հեգելով միավանկ կամ երկվանկ բառերը կարդալն է. երեխան կը ճանչնայ տառերը, բայց տակաւին անծանօթ կամ ծանօթ բազմավանկ բառերը կարդալ չի կրնար, այլ վերջինները կը կարդայ հեգելով կամ վանկերով:

Կարդալու **կարողութիւնը** կը ներկայացնէ ընթերցելու նոր՝ ատելի բարձր մակարդակ, երբ երեխան կը կարդայ անսխալ, պահպանելով ձիշդ եւ հասկնալով կարդալու որակական յատկանիշները, սակայն յաճախակի երեխան կը կարդայ նախադասութեան բառերը զատ-զատ, այսինքն՝ բառերուն միջեւ տրամաբանական կապեր չի ստեղծեր, անհարկի դադարներ կ'առնէ, բառերը կ'ընթերցէ ոչ թէ աչքի մէկ ակնդրումով, այլ միտքէն կ'ընթերցէ, ետքը՝ բարձրաձայն կը կարդայ: Միաժամանակ կարդալու կարողութիւն չունեցող մարդը երբեմն ընթերցած ժամանակ կը կրկնէ որոշ բառեր (ժամանակ կը շահի՝ յաջորդ բառը

միտքին մէջ կարդալու համար), թոյլ կու տայ մասնակի ուղղախօսական սխալներ: Ուղղախօսական սխալներ են կը մասնիկը (**կը գրեմ**) եւ է օժանդակ բայը բառէն զատ կարդալը (**ձմեռ է**), գ-ք, դ-թ, ջ-չ եւ այլ նմանօրինակ բաղաձայններու ուղղափոխութիւնը. բառին մէջ գրուող դ-ն կը կարդացուի թ (**կարդայ**), գ-ն՝ ք (**կարագ**), ջ-ն՝ չ (**աղջիկ**), եւայլն:

Կարդացողը **հմուտ է**, այսինքն՝ ունի կարդալու **հմտութիւն**, կը նշանակէ ան կը կարդայ անթերի՝ **ճիշդ, սահուն, հասկնալով, արտայայտիչ**, կը պահպանէ սեփական խօսքին արագութիւնը, ուղղախօսական կանոնները եւ հայերէնի գրական շեշտը: Ասիկա ընթերցելու ամէնէն կատարեալ մակարդակն է, որ պէտք է իրականացուի դպրոցին մէջ: Որքան ալ «ԾԱՂԻԿ» խումբին դաստիարակը լաւ աշխատի, հնարաւոր չէ 5-6 տարեկան փոքրիկէն հմուտ կարդացող ձեւաւորել: «ԾԱՂԻԿ» խումբին վերջաւորութեան, եթէ երեխաներուն մեծ մասը ունենայ կարդալու պարզ կարողութիւն (բնագիրը կարդալու), կը նշանակէ խնդիրը լուծուած է:

Ցանկացած հմտութիւն կը ձեւաւորուի վարժութիւններու՝ վարժուելու ճանապարհով: Կարողութիւնը կը դառնայ հրմտութիւն բազմակի կրկնութիւններու ճամբով: Ինչ կը վերաբերի կարդալու հմտութեան ձեւաւորումին, յիշեցնենք.

Երեխան լաւ կարդալ կը սորվի շատ կարդալով ոչ թէ միեւնոյն նիւթը, այլ տարբեր նիւթեր: Աւելի լաւ է երեխան հեզելով կարդայ 5 տարբեր նիւթեր, քան 10 անգամ կարդայ նոյն նիւթը:

Ծրագրային բովանդակութիւնը կը ներկայացուի **սորվեցնել, ձեւաւորել, զարգացնել** եզրաբառերը յաճախակի գործածելով, որոնք, ըստ էութեան, երեխաներուն գիտելիքներու եւ կարողութիւններու ձեւաւորումի, ամբողջացումի աստիճաններն են:

Եթէ ծրագրային պահանջի մէջ մենք կը գործածենք **սորվեցնել** բառը, կը նշանակէ մենք ծրագիրով կը նախատեսենք նիւթին շուրջ զրոյցներ, յանձնարարականներ, բացատրութիւններ, որոնց ընթացքին 3-6 տարեկան փոքրիկները պէտք է լսեն, հասկնան, մտածեն այդ նիւթերուն շուրջ, ծանօթանան անոր (նիւթին կամ ունակութեան) առանձին նրբութիւններուն եւ **փորձեն** կատարել զանոնք՝ ունակութեան մակարդակով. պայման չէ, որ անիկա դառնայ կարողութիւն, առաւել եւս՝ հմտութիւն:

Խումբէ-խումբ աւելի յաճախ կը կրկնուին **ձեւաւորել** եւ **զարգացնել** բառերը: Կը նշանակէ, որ այն ինչ սորվեցուցած ենք նախորդ խումբին մէջ, պէտք է աստիճանաբար զարգացնել, ընդարձակել, բարձրացնել նոր մակարդակի մը՝ դարձնելով **կարողութիւն** կամ **հմտութիւն**:

Ծրագիրին բովանդակութիւնը բաւականին լայն է՝ ընդարձակ: Անիկա կը ներկայացնէ ոչ միայն մայրենի լեզուին խնդիրները. մայրենի լեզուին պարապմունքները (դասապահերը) միայն հայերէն խօսելու եւ գրաձանաչ դարձնելու համար չեն: **Մայրենին պէտք է դառնայ երեխայի աշխարհաձանաչումի, ընկերային-կենցաղային յարաբերութիւններու ձեւաւորումին, հոգեկան-զգացմունքային որակներու զարգացումին ուղեկցող գործօն, միջոց. ամէն ինչին մասին մեծը երեխային հետ պէտք է խօսի մայրենիի միջոցաւ եւ մայրենի լեզուի հոգեբանական հիմքերուն վրայ: Միայն այս ձանապարհով մենք կը ձեւաւորենք երեխայի՝ մայրենի լեզուով մտածողութիւնը եւ հայու հոգեկերտուածքը:**

Ըսինք՝ ծրագրային նիւթը ընդարձակ է, ու անիկա տըրւած է ամբողջ տարուան ընթացքին իւրացնելու համար: Սակայն, բնական է, որ ողջ տարուան ընթացքին սորվեցուցած ամէն ինչ չէ, որ երեխան **կրնայ կամ պարտաւոր է իւրացնել** կարողութեան մակարդակով: Ճիշդ ասիկա հաշուի առնելով մենք ծրագիրին մէջ նախատեսած ենք

«ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՎԱՆՋՆԵՐ» բաժինը, ուր կը ներկայացուի այն պարտադիր սահմանը, որուն պէտք է հասնին փոքրիկ մարդիկ տարեվերջին:


«ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՎԱՆՋՆԵՐ» խորագիրին ներքոյ կը ներկայացուին հիմնականին մէջ **կարողութիւններ**, այսինքն՝ ոչ գիտելիքներ: Ասիկա կը նշանակէ, որ մենք երեխայէն պէտք է ակնկալենք գիտակցական գործողութիւններ (ինչ որ ընեն, պէտք է հասկնան) եւ ոչ թէ տեսական բացատրութիւններ, սահմանումներ, կանոններ:

«ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՎԱՆՋՆԵՐ»ը պարտադիր են տարեվերջին բոլոր երեխաներուն համար, անշուշտ, մակարդակներու տարբերութեամբ, որ կը պայմանաւորուի երեխաներու զգայարաններու, հոգեկան գործընթացներու զարգացածութեան մակարդակներով:

Ծրագիրով նախատեսուած բոլոր խնդիրներու լուծումին ձեւերու, մեթոդներու, հնարներու, վերջապէս՝ **ողջ գործընթացի հիմքը կը կազմեն երեխայակեդրոն մօտեցումները**, որոնք առաջին հերթին հնարաւոր է իրականացնել երեխաներէն **ԻԻՐԱՔԱՆՉԻՐԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ**: Իրաքանչիւր երեխայի հնարաւոր է մասնակից դարձնել ուսուցումին՝ համագործակցային, փոխ գործուն մօտեցումներու՝ որքան հնարաւոր է շատ կիրառումով, աշխատանքը կազմակերպելով փոքր խումբերով եւ զոյգերով:

Իրաքանչիւր երեխայ իր խումբին մէջ պէտք է ինքզինք զգայ ինքնուրոյն հանդէս եկող անձ. խումբով արտասանելը, խումբով կարդալը երեխային կը զրկէ ոչ միայն անհատականութենէն, այլեւ իր գործողութիւններուն համար պատասխանատուութենէն:

ՅԻՇԵՆՔ. Իրաքանչիւր առողջ երեխայ կրնայ



մանկապարտէզին մէջ իւրացնել սոյն ծրագրի բովանդակային նիւթը: Պարզապէս պէտք է հաշուի առնել, որ ամէն երեխայի համար արդիւնքի հասնելու ժամանակը կրնայ տարբեր ըլլալ: Պայմանաւորուած հոգեկան գործընթացներու եւ զգայարաններու զարգացածութեան մակարդակով՝ երեխան կրնայ առաջին բացատրութենէն ետք ըմբռնել կամ քանի մը անգամ լսելէն ետք նոր հասկնալ:

Ա.
«ԲՈՂԲՈՋ»
ԽՈՒՄԲ



«ԲՈՂԲՈՋ» խումբին մէջ մայրենի լեզուին պարապմունքներու (դասապահերու) նպատակը երեխային բառամթերքի հարստացումն է, խօսքի զարգացումը, այսինքն՝ հայերէն մտածելու եւ խօսելու ունակութեան ձեւաորումը: Գաղտնիք մը չէ, որ մանկապարտէզ եկած երեխաներուն մէջ շատեր տակաւին խօսիլ չեն գիտեր, մէկ մասը չունի համապատասխան բառամթերք, քիչերը ազատ կը խօսին, կը բացատրուին, աւելին՝ ունին որոշակի մակարդակի հասած հայեցի լեզուամտածողութիւն եւ խօսք: Ասիկա կը նշանակէ, որ դաստիարակը գործ ունի խօսքի եւ մտածողութեան տարբեր մակարդակներ ունեցող մանուկներու հետ, ինչ որ, բնականաբար, կը դժուարացնէ անոր աշխատանքը «ԲՈՂԲՈՋ» խումբին մէջ: Միւս կողմէն, մակարդակներու այս տարբերութիւնը կ'օգնէ դաստիարակին, որովհետեւ խօսիլ գիտցող եւ չգիտցող երեխաներուն հաղորդակցութիւնը կը նպաստէ խօսքի ընդօրինակումին:

3-4 տարեկան ժամանակահատուածը միաժամանակ աշխարհի ճանաչումի, ամէն ինչ գիտնալու, ճանչնալու ամենաբարենպաստ ժամանակահատուածն է: Աշխարհը ճանչնալու, ամէն ինչ գիտնալու երեխայի գործունէութիւնը, մասնաւորապէս անոր արդիւնաւէտութիւնը կը պայմանաւորուի փոքրիկի զգայարաններու եւ հոգեկան գործընթացներու հնարաւորինս զարգացումով:

Տարիքային այն ժամանակահատուածը, որ կը համընկնի երեխաներու «ԲՈՂԲՈՋ» խումբին մէջ ընդգրկուելուն, կը կարեւորուի եւս մէկ կենսականօրէն էական գործընթացներու՝ հոգեկանի բաղադրիչներու, մասնաւորապէս՝ ուշադրութեան, յիշողութեան, մտածողութեան, երեւակայութեան եւ զգացմունքներու ձեւաորումի ու զարգացումին հետ:

Ուրեմն, «ԲՈՂԲՈՋ» խումբին մէջ փոքրիկներուն հետ պէտք է աշխատիլ դանդաղ եւ զգուշօրէն՝ կարեւորելով անոնց տարիքային առանձնայատկութիւնները:

1. ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ ԵՒ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1.1 ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

- Ծանօթութիւն մարմինի մասերու անուններուն եւ անոնց գործողութիւն ցոյց տուող բառերուն (աչք - աչքերով կը տեսնենք, քիթ - քիթով կը շնչենք, մատ - մատներով կը շօշափենք, եւայլն):

- Սորվեցնել ընտանիքի անդամներուն (մայր, հայր, քոյր, եղբայր, տատ (մեծ մայր), պապ (մեծ հայր) անունները:

- Ծանօթութիւն տարրուան եղանակներուն, շաբթուան օրերուն եւ անոնց անուններուն:

- Ճանչնալ եւ ըսել պտուղներու եւ բանջարեղէններու խումբերուն մէջ մտնող անուններ, ընդհանրացնող անուններ, անոնց համը (անուշ, թթու, կծու), չափը (մեծ, փոքր, աւելի փոքր), ձեւը (կլոր, երկար, կակուղ, եւայլն):

- Սորվեցնել խումբին երեխաներու անունները եւ իրարու դիմելու ձեւերը եւ կարողութիւնը:

- Բառամթերքը հարստացնել՝ առարկայ, անձ եւ անոնց գործողութիւնները, ինչ տեսակ ըլլալը ցոյց տուող բառերով:

- Ծանօթութիւն ընտանի կենդանիներուն (կատու, շուն, կով, ոչխար) եւ թռչուններուն (ծիծեռնակ, թութակ), զրուցել անոնց բնակութեան վայրին, տուած օգուտին մասին:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխաներու բառամթերքի հարստացումը կ'իրականացուի ոչ թէ բառեր սորվեցնելով, այլ զանոնք ներկայացնող իրերու, անոնց նկարներու շուրջ իրականացնող խաղերով եւ խաղային իրադրութիւններով:

• Սորվեցնել հիմնական գոյները, անոնց անունները, ձեւաւորել առարկաները ըստ գոյներու տարբերելու ունակութիւն (սեւ, ձերմակ, կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ):

• Ծանօթութիւն՝ երեխային առօրեայ հանդիպող ծաղիկներու անուններու (2-3) եւ անոնց գոյներուն: Բառամթերքի մէջ մտցնել **հոտ, հոտաւէտ, անուշահոտ** բառերը:

1.2 ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

• Սորվեցնել դաստիարակին տուած հարցերուն ամբողջական նախադասութիւններով պատասխանել (2-3 բառէ կազմուած). (*Ասիկա ինքնաշարժ է: Ինքնաշարժը կարմիր է:*)

• Ձեւաւորել օրհորդին տուած առաջադրանքը (1 յանձնարարութենէ կազմուած) հասկնալու եւ ըստ բացատրութեան կատարելու ունակութիւն:

• Սորվեցնել անհրաժեշտ առիթով բարեւելու, ողջունելու, շնորհաւորելու, պարզ հարցումներ ձեւակերպելու լեզուական կառոյցները գործածելը (*Բարեւ, օրհորդ Հորի, ինչպէ՞ս էք: Ասիկա ի՞նչ է: Այս ո՞վ է:*):

• Ձեւաւորել պարզ բովանդակութեամբ, 1-2 գործող անձեր ունեցող գունաւոր նկարներուն մէջ ներկայացուած հերոսներուն անուններ տալու, անոնց գործողութիւններուն մասին պարզ նախադասութիւններ կազմելու պարզ ունակութիւնները (*Սարինը կը պարէ: Սոնան կը նկարէ: Հաւերը հաւկիթ ածեցին: ...*եւայլն) :

• Սորվեցնել տարուան տարբեր եղանակներուն յատուկ օղի (*օղը մաքուր է*), արեւի (*արեւոտ եղանակ է*), բնութեան (*ծառերը ծաղկած են*), մարդոց (*մարդիկ տաք կը հագուին*) մասին պարզ նախադասութիւններ կազմել եւ արտաբերել (*ձիւնեմարդ կը շինենք: Ծառերուն տերեւները կը թափին: ...*եւայլն):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

3-4 (առաել եւ 3-ը տակաւին չամբողջացուցած) տարեկան երեխային մտածողութիւնը առարկայական է, իրատեսական: Ասիկա կը նշանակէ, որ երեխան կրնայ նախադասութիւն կազմել, առաել եւ՝ **խօսիլ այն մասին, ինչ ոչ միայն տեսած է, այլեւ այդ պահուն անոր աչքին առջեւն է, կը տեսնէ, կը շօշափէ:** Ուրեմն՝ երեխաներուն մշտապէս պէտք է ցուցադրել մանկական, հետաքրքրական բովանդակութեամբ նկարներ, խաղալիքներ, առարկաներ պէտք է տալ անոնց ձեռքը: Միայն այս պարագային երեխան կը ներշնչուի եւ կը ձգտի խօսելու:

- Ձեւաորել դաստիարակին, շրջապատող մեծահասակներուն ամբողջական նախադասութիւններով իր ցանկութիւնները յայտնելու ունակութիւն (*Օրհորդ, ես ծարաւ եմ (ջուր կ'ուզեմ): Մամմ, ես կը պաղիմ: Օրհորդ, կրնամ ելլել: Օրհորդ, ես մատիտ չունիմ (ես չգծեցի), եայլն):*

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ինչպէս բոլոր մանուկներու, առաել եւ այս տարիքի փոքրիկներուն խօսքը կը ձեւաւորուի եւ կը զարգանայ դաստիարակներուն, երեխաները շրջապատող մեծահասակներուն եւ փոքրերուն խօսքի ունկնդրումի եւ կրկնօրինակումի ձանապարհով: Կը նշանակէ՝ երեխային հետ պէտք է գործածելով այն բառերը եւ արտայայտութիւնները, որոնք նախատեսուած են յատկապէս անոնց սորվեցնելու համար:

խօսիլ՝

ՅԻՇԵՆՔ. պայման չէ, որ դաստիարակը ամէն անգամ նախատեսուած բառերը, արտայայտութիւնները եւ նախադասութիւնները սորվեցնելու համար իր ետեւէն կրկնել տայ փոքրիկին: Բաւական է, որ երեխան անընդհատ լսէ, օրհորդը բազմիցս զանոնք գործածէ, եւ յետոյ այդ բառերը աննկատելիօրէն կը դառնան երեխաներուն խօսքի գործօն բաղադրիչները:

- Սորվեցնել տարեկիցներուն հետ խօսելու, անոնց դիմելու (*Կարէն, հաճիս մատիտ կու տամ:*), խնդրելու (*Կը խնդրեմ, հաճիս, քիչ մը անդին նստէ:*) խօսքային ձեւեր, մշակել այդ եւ ոչ ըսելու սովորութիւն:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Մինչեւ 3 տարեկան երեխան իրաւունք ունի չխօսիլ: Եթէ երեխան ընդունուած է մանկապարտէզ տակաւին չձեւաւորուած խօսքով, պէտք չէ անհանգստանալ: Սակայն երեխայի չխօսիլը առաջին հերթին կը վնասէ իրեն, անոր հոգեկան աշխարհին. չխօսող, իրեն անհանգստացնող միտքերէն չձերբազատող, իրեն յուզող երեւոյթներու մասին չարտայայտող փոքրիկը, որպէս կանոն, ջղագրգիռ կ'ըլլայ, կը դառնայ լալկան, կամակոր: Ուրեմն, անհրաժեշտ է անոր ցանկացած ձեւով խօսեցնել:

- Ձեւաւորել ուսուցիչին լսելու, անոր ըսածները, յանձնարարութիւնները կատարելու (եթէ անգամ տակաւին չի խօսիր) ուսուցիչին եւ ընկերներուն հասկնալու, անոնց արձագանգելու ունակութիւններ:

ՅԻՇԵՆՔ. Չխօսող երեխան պէտք է մեծին լսէ, կատարէ անոր ցուցումները, խումբին հետ երգէ, արտասանէ, ծիծաղի, լայ, ժպտայ: Ասոնք ներքին խօսքի՝ միտքի, մտածելու կարողութեան առկայութիւն են, որոնք կը հաւաստեն, որ երեխան կը խօսի (կրնայ խօսիլ): Այս ամէնի բացակայութեան պարագային պէտք է անպայման դիմել բժիշկի օգնութեան:

- Կազմակերպել փոքրիկ հանդէսներ՝ ի ցոյց դնելով երեխաներու՝ ասմունքելու, երգելու, պարելու ուղղութեամբ «բողբոջ» խումբին մէջ ձեռքբերումները:
- Ներկայացնել երեխաներու ձեռքի աշխատանքներու, անոնց մտայնացումներու ցուցահանդէսներ:

1.3 ՀՆՉԻՒՆԱՅԻՆ ԼՍՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

• Ուշադրութեամբ հետեւիլ, որ երեխաները ճիշդ արտաբերեն բառերը (յստակ, մինչեւ վերջին հնչիւնը), բառին հնչիւնները չաղաաղեն, ուսուցիչին յանձնարարութեամբ արտասանեն՝ կրկնեն անոր արտասանած առանձին (մեկուսի) հնչիւնները:

• Խաղի ճամբով ձեւաւորել բնաձայնութեան վերարտադրումի կարողութիւն (*ինչպէ՞ս կը մլաւէ կատուն, ինչպէ՞ս կը հաջէ շունը, ինչպէ՞ս կը բառաչէ կովը, ինչպէ՞ս կը ծլուրլան թռչունները*) եւ սորվեցնել իրաքանչիւր կենդանիին հանած ձայնի անուանումին ճիշդ արտասանութիւնը (*կը մլաւէ, կը հաջէ, կը մկըկայ, կը ծլուրլայ, կը կոկրայ*, եւ այլն):

• Խաղերու միջոցով ձեւաւորել իրենց ընկերներուն ձայները ծանչնալու եւ ձայն հանող երեխային անունը ըսելու ունակութիւն:

- Ձեռնարկել դաստիարակի հրահանգով բարձր, ցած խօսելու, երգելու ունակություններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ բառերով եւ ամբողջական պարզ նախադասություններով արտայայտել իր միտքերը, ցանկությունները:
2. Գիտէ մշտապէս գործածուող պտուղներուն եւ բանջարեղէններուն անունները, կը ճանչնայ անոնց գոյները, համերը:
3. Կրնայ տարբերել ընտանի կենդանիները եւ նշել անոնց տուած օգուտին մասին (*կովը կաթ կու տայ, հաւը հաւկիթ, եւ այլն*):
4. Կը գործածէ առարկայ եւ անոր կատարած գործողությունները ցոյց տուող բառեր (գոյական+բայ):
5. Դաստիարակին օգնութեամբ կը կառուցէ 2-3 պարզ նախադասութիւն դիտած նկարին, ձեռքին բռնած խաղալիքին, առարկային մասին:
6. Գիտէ տարեկիցներուն եւ մեծերուն դիմելու, անոնց ողջունելու, շնորհատրելու ձեւերը, ունի իրեն յուզող թեմայով պարզ հարցեր տալու կարողութիւն:
7. Գիտէ իր անունը, ծնողներուն, ընտանիքին անդամներուն եւ խումբին երեխաներուն, դաստիարակին անունները եւ անոնց դիմելու ձեւերը:
8. Կրնայ անխառն, մաքուր կրկնել դաստիարակին արտասանած հնչիւնները:

2. ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ. ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2.1. ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Գործունեության տարբեր ձեւերու իրականացումի ճամբով աշխատանք տանիլ երեխաներու 5 զգայարաններու (աչքեր՝ տեսողութիւն, ականջներ՝ լսողութիւն, քիթ՝ հոտառութիւն, բերան՝ համ եւ մատներ՝ շօշափելիք) զարգացումին ուղղութեամբ:

Սորվեցնել իրարմէ տարբերել երկրաչափական պարզ պատկերները. եռանկիւն, քառանկիւն, շրջան՝ տալով պարզ բացատրութիւններ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Փոքրիկ առողջ մարդուն բոլոր զգայարանները պատրաստ են գործունեության գրեթէ անոնց ծննդեան օրէն: Փոքրիկին զգայարանները կը զարգանան նաեւ կեանքի տարբեր պայմաններուն մէջ պարզ շփումներու միջոցով: «ԲՈՂԲՈՋ» խումբին մէջ երեխաներու զգայարաններու զարգացումի խնդիրները կը լուծուին անոնց տալով այնպիսի առաջադրանքներ, որոնց կը մասնակցին որքան հնարաւոր է շատ զգայարաններ:

- Սորվեցնել առարկաներու տարբերութիւնները եւ նմանութիւնները տեսողութեամբ, շօշափելով, հոտով, համով, անոնց հանած ձայներով որոշելու ունակութիւն:

- Սորվեցնել լսել բնութեան ձայները (ամպրոպի, անձրեւի, քամիի, սիւքի՝ հովի, տերեւներուն, ծորակէն հոսող

ջորին, ծովի ալիքներուն, եւ այլն):

• Ձեւաւորել աչքերը գոց՝ սնունդին տեսակը համով եւ հոտով որոշելու կարողութիւն (խնձոր է, պանիր է, հաց է, նուռ է, տուրմ է, եւ այլն):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Մարդը աշխարհը կը ճանչնայ, գործունէութիւն կը ծաւալէ (խաղ, ուսում, աշխատանք) իր զգայարաններուն օգնութեամբ: Նկարելու համար մարդը պէտք է ունենայ ոչ միայն ձեռքեր, այլեւ նրբանկատ, անսովոր տեսողութիւն, քանդակելու համար՝ ոչ միայն տեսողութիւն, այլեւ՝ մատներ, շօշափելու, մատներուն տակ չափազանց նրբօրէն զգալու ունակութիւն, երաժիշտը՝ նուագողը, երգողը, պիտի ունենայ սուր լսողութիւն, եւ այլն:

Ուրեմն՝ զգայարաններուն զարգացումը կարեւոր խնդիր է: Անոնցմով պայմանատրուած է մարդուն գործունէութեան բոլոր ձեւերուն արդիւնաւէտութիւնը:

2.2 ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ա) Ուշադրութեան զարգացում

• Ձեւաւորել քանի մը վայրկեան անշարժ նստելու, դաստիարակին բացատրութիւնը, յանձնարարութիւնը, պատմութիւնը լսելու, նկարը դիտելու, առարկան, իրը զննելու ունակութիւններ:

• Օգտագործելով երեխան հետաքրքրող խաղեր, գրափչ, գունեղ նկարներ, առարկաներ՝ սորվեցնել զանոնք զննելու, նմանություններու եւ տարբերություններու մասին խօսելու, առարկաները տարբերելու եւ դասդասելու ունակություններ (ըստ գոյնի, ձեւի, համի):

• Ձեւաւորել զբաղումի մէկ տեսակէն միւսին անցնելու, ուշադրութիւնը (կեդրոնացումը) գործունէութեան մէկ ձեւէն միւսին կեդրոնացնելու տարրական ունակութիւն:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

3 տարեկան երեխային ուշադրութիւնը կամածին չէ: Այսինքն՝ ան չի կրնար կամքի ուժով ինքզինքին թելադրել, պարտադրել ուշադրութիւնը կեդրոնացնել մեծին կարծիքով կարելոր նկատուող որեւէ առարկայի կամ խօսքի վրայ: Միայն ուշագրաւ ըլլալը կրնայ երեխան մղել ուշադիր ըլլալու, այն ալ՝ բաւականին կարճ ժամանակի համար:

բ) Յիշողութեան զարգացում

ՅԻՆԵՆՔ Ուշադրութիւնը որեւէ բանի մը վրայ որոշակի ժամանակահատուածով բեւեռելու երեխայի կարողութիւնը կը նպաստէ յիշողութեան զարգացումին:

• Ձեւաւորել դաստիարակին յանձնարարութիւնը (միայն մէկ յանձնարարութիւն ներկայացնող առաջադրանք) յիշելու, անոր բացատրածը մտաբերելու եւ զայն կատարելու ունակութեան պարզ մակարդակ:

• Սորվեցնել խումբին երեխաներուն անունները, հասնիլ անոր, որ բոլորը գիտենան իրարու անունները, ճանչնան

զիրար նաեւ ձայներով:

- Հարցազրոյցի միջոցով ձեւաւորել **երէկ, այսօր, վաղը** բառերը հասկնալու, երէկ կատարուածին մասին յիշելու եւ պատմելու (*՚նոր գացիք երէկ՝ Կիրակի օրը, ես ձեզի ի՞նչ պատմեցի երէկ, վաղը ես պատմութիւնը կը շարունակեմ, այսօր ինչո՞վ մենք զբաղեցանք, եւ այլն*) ունակութիւնները:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

3-4 տարեկան երեխան լաւ կը յիշէ այն, ինչ իրեն կը հետաքրքրէ, ինչ տպաւորիչ է, ինչ իրեն համար կարեւոր է, եւ ամենակարեւորը՝ եթէ պատմածը, բացատրածը զուգորդուած է ցուցադրումներով, իրականացուած է երեխաներուն մասնակցութեամբ՝ գործածելով անոնց բոլոր զգայարանները:

- Ձեւաւորել որոշակի գործողութիւններ, անոնց շարքին՝ նաեւ պարտականութիւնները յիշելու եւ զանոնք կատարելու ունակութիւն (խմբաստենեակէն ելած ատեն զգուշացնել օրիորդին, կախել անուանաթերթիկը, աթոռը շտկել, տեղը դնել, ջրամանը կախել միշտ նոյն կախիչէն, յիշել իր աթոռին, պահարանին նաշխը, գրենական պիտոյքին տեղը, եւ այլն):

գ) Երեւակայութեան զարգացում

- Սորվեցնել երեւոյթները եւ առարկաները, անոնց կատարած գործողութիւնները ներկայացնել ձեռքերու, գլուխի, մատներու, ոտքերու, բերնի շարժումներով (ինչպէս կը շարժի ժամացոյցին սլաքը, ինչպէս կը թռչկոտէ նապաստակը, ինչպէս կը քալէ արջը, ինչպէս կուտ կ'ուտէ հաւը, եւ այլն):

• Ձեռնարկել անաւարտ նկարը (երեխային ծանօթ առարկայի) դիտելէն յետոյ առարկայի (կենդանի, պտուղ, ինքնաշարժ, եւ այլն) նկարին մէջ պակտող մասը պատկերացնելու, զայն նշելու (*կը պակսի փիղին կնճիթը, նապաստակին ականջները կը պակսին, եւ այլն*) եւ նկարը ամբողջացնելու ունակութիւններ:

• Ձեռնարկել կտրտած (երկու մասի բաժնուած) նկարները (պարզ առարկան երկու մասի բաժնուած) միաւորելու, ամբողջացնելու կարողութիւն:

• Զարգացնել աչքերը գոց որեւէ իր, կենդանի, երեւոյթ պատկերացնելու (օրինակ՝ նարինջ, արեւ, անձրեւ, նապաստակ, կապիկ, ձիւն եւ այլն), զայն խօսքով ներկայացնելու (*ինչ տեսայ, ինչ գոյն ունէր, ինչ ձեւ ունէր, եւ այլն*)՝ անոնց մասին 1-2 նախադասութեամբ խօսելու (*քու տեսած փիսիկը ի՞նչ կ'ընէր, քու պատկերացուցած ամպերը ինչի՞ կը նմանէին եւ այլն*) ունակութիւններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ գործածելով իր բոլոր զգայարանները՝ ներկայացնել առարկաներու յատկանիշները, ըստ ձեւի, հոտի, համի, չափի, կակուղութեան եւ այլն:

2. Կրնայ 3-4 վայրկեան անշարժ նստիլ, լսել դաստիարակին բացատրութիւնները, կը կատարէ մէկ յանձնարարութիւն պարունակող առաջադրանք:

3. Կը յիշէ ինչ յանձնարարուած է, դաստիարակին հարցերուն օգնութեամբ արագ կը մտաբերէ նորածանօթ բառը, առարկան, փոքրածաւալ պատմութեան հերոսներուն անունները, դէպքերը:

4. Ճիշդ կը գործածէ **երէկ**, **այսօր**, **վաղը** բառերը եւ կը յիշէ երէկ կատարած իր գործողութիւնները:

3. ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՅՈՒՋԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

3.1. ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

- Մշակել ընկերություն ընելու, խումբին մէջ ընկերներ ընտրելու մատչելի ձեւեր, ձեւաւորել մտերիմ ընկեր ունենալու, անոր կողքին նստելու, զբօսանքի ատեն անոր ձեռքը բռնելու, անոր հետ նախաձաշելու, նախաձաշիկէն բաժին հանելու (հիւրասիրելու) ցանկություն եւ ունակություն:

- Ձեւաւորել աղջիկ-տղայ յարաբերություններ, տղոց մօտ՝ աղջիկներուն օգնելու (ճանապարհ տալ, ինկած իրը բարձրացնել, զիջիլ), անոնց նկատմամբ առաւել ներողամիտ գտնուելու պարզ ունակություններ:

- Սորվեցնել մեծերուն հետ խօսակցութեան բռնուելու, անոնց ինչ որ խնդիրով դիմելու պարզ, բարեկիրթ ձեւեր (*կրնամ բան մը հարցնել, հաճիս ինձի կու տաս այս մատիտը եւ այլն*):

- Ձեւաւորել խումբի երեխաներուն հետ համերաշխ խաղալու, խաղալիքները, գրենական պիտոյքները միմիանց զիջելու եւ իրարմէ խնդրելու կարողություններ:

- Սորվեցնել ընկերներուն եւ մտերիմ մարդոց ջերմ խօսքերով դիմելու ձեւեր (*անուշ մայրիկ, իմ լաւ հայրիկ, անուշիկ քոյրիկս, իմ լաւ ընկերս, ախպարիկս, քոյրիկս եւ այլն*):

- Նպաստել, որ երեխաները խաղին մէջ ընդգրկուին ոչ միայն իբրեւ մասնակից, դիտող, այլեւ իբրեւ կազմակերպիչ, ղեկավար:

- Ձեւաւորել խումբին կանոնները ճանչնալու, ընդունած պարզ կանոններուն ենթարկուելու եւ ընկերներուն այդ

հարցերուն մէջ օժանդակելու ունակութիւններ:

3.2. ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՅՈՒՋԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

• Օգնել ճանչնալու ինքզինք, (ես տղայ եմ, ես աղջիկ եմ, ես Անի Գալուստեանն եմ, ես 4 տարեկան եմ եւ այլն) ներկայացնելու իր ունակութիւնները եւ ձգտումները (ես պարել շատ կը սիրեմ: Ես մայրիկիս կ'օգնեմ: Ես պարի կ'երթամ: Ես կրնամ կօշիկներուս կապերը կապել, եւ այլն), հպարտանալու իր եւ հարազատներուն ձեռքբերումներով (հայրիկս հանրայայտ ոսկերիչ է: Մայրիկս շատ համեղ կարկանդակ կը թխէ: Իմ քոյիկս շատ գեղեցիկ կը գրէ եւ այլն):


• Ձեռնարկել ընկերներուն, մեծերուն, օտարներուն սիրով, խանդավառութեամբ օգնելու, ձեռք մեկնելու ցանկութիւն եւ դրսեւորումի կարողութիւններ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Վերը նշուած գործողութիւններուն մէջ խանդավառութիւն հանդէս բերելու, իրաքանչիւր գործին մէջ սէր, ձգտում արթնցնելու նպատակով պէտք է ձգտիլ երեխաներուն ոգեւորել, երբեմն այդ նպատակի համար պէտք է մրցակցային մթնոլորտ ստեղծել:

• Սորվեցնել հետեւիլ ընկերներուն տրամադրութեան, առնոց ապրումակցիլ ինչպէս գործողութիւններով (օգնել, ինկած ընկերը բարձրացնել, հագուստները թօթուել), այնպէս ալ խօսքով (մի՛ լար, մի՛ տխրիր, եկուր քովս, ես քեզի կ'օգնեմ եւ այլն):

• Սորվեցնել իր եւ տարեկիցներուն յուզական վիճակ-



ները ներկայացնող բառեր եւ բառակապակցութիւններ, նախադասութիւններ եւ զանոնք տեղին գործածելու ունակութիւններ ձեւաորել:

- Տօնել երեխաներու ծննդեան օրերը՝ սորվեցնելով շնորհաւորանքներու, մաղթանքներու պարզ, մատչելի եւ այդ տարիքին համար հասկնալի բառեր եւ արտայայտութիւններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կը ձգտի յարաբերիլ իր տարեկիցներուն հետ, կ'օգնէ անոնց նեղութեան, դժուարութեան պահուն եւ կը խնդրէ անոնց օգնութիւնը:

2. Խումբին մէջ ունի մտերիմ ըներներ, դադարներուն ժամանակ անոնց հետ կը խաղայ, կը հաղորդակցի հետերնին:

3. Ունի խումբի պարզ կանոններուն ենթարկուելու ունակութիւն եւ ձգտում:

4. Գիտէ իր եւ մերձաւորներուն արժանիքները, կը գնահատէ եւ կը մատնանշէ զանոնք:

5. Կրնայ ներկայացնել իր յոյզերը եւ ապրումները, զանոնք կը բացատրէ պարզ նախադասութիւններով:

6. Կը հասկնայ՝ կը զգայ տարեկիցին հոգեվիճակը (տխուր է, ուրախ է), կը փորձէ օգնել անոր իր ուժերուն սահմանին մէջ:

4. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ

4.1. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԱՐԶ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

- Սորվեցնել անձնական իրերը պահարանին մէջ դնելու, ինքնուրոյն հագուելու, հանուելու, կօշիկները հագուելու, հանելու, տեղը դնելու ունակութիւններ:

- Ձեւաւորել գաւաթէն, դգալէն եւ պատառաքաղէն ճիշդ օգտուելու, անձեռոցիկ, թաշկինակ գործածելու կարողութիւններ եւ ատոր անհրաժեշտութեան գիտակցում:

- Սորվեցնել ուտելէն առաջ ձեռքերը լուալ, ուտելէն յետոյ՝ լուալ կամ թաշկինակով սրբել, սեղանին շուրջ ճիշդ նստիլ:

- Սորվեցնել ըստ անհրաժեշտութեան, *բարի լոյս, բարեւ ձեզ, շնորհակալութիւն, ցտեսութիւն եւ ներողութիւն* բառերը գործածել:

4.2. ՎՏԱՆԳՆԵՐԷՆ ՀԵՌՈՒ ՄՆԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

- Սորվեցնել զգոյշ քալելու (քալած ատեն ոտքերուն տակը նայիլ), վազելու (վազած ատեն ուշադիր ըլլալ շրջապատի մարդոց նկատմամբ), անծանօթ մարդոց հետ չյարաբերելու, կենդանիներուն չմօտենալու, ձեռք չտալու կանոններ եւ ունակութիւններ:

- Ձեւաւորել ջուրի, կրակի, սուր կտրող գործիքներու եւ նմանօրինակ այլ առարկաներու հետ խաղ չընելու, առանց մեծերու օգնութեան անծանօթ գործողութիւններ չկատարելու ունակութիւններ:



ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան ունի ինքնասպասարկումի պարզ կարողություններ:
2. Կը գիտակցի միջավայրին մէջ իրեն վտանգ սպանացող իրերէն հեռու մնալու անհրաժեշտութիւնը եւ ունի այդ ուղղութեամբ պարզ ունակութիւններ (հեռու մնալ վտանգաւոր իրերէն):
3. Կը տիրապետէ **բարի լոյս, բարեւ ձեզ, շնորհակալութիւն, ցտեսութիւն** բառերուն տեղին գործածութեան ունակութիւն:

Բ.

«ԿՈԿՈՆ»

ԽՈՒՄԲ




«Կոկոն» խումբին մէջ ամենակարեւորը երեխաներու մայրենի լեզուով խօսելու կարողութեան ձեռք բերումն է (տարիքին համապատասխան):

4-5 տարեկան փոքրիկները պիտի ամբողջութեամբ տիրապետեն տարեկիցներու եւ մեծերուն հետ որոշակի թեմաներու շուրջ մայրենի լեզուով հաղորդակցուելու կարողութեան: Մայրենի լեզուով հաղորդակցութեան կարողութեան ձեռքբերումի համար մանկապարտէզի կեանքին մէջ պէտք է ստեղծել հաղորդակցութեան համար նախագծուած յատուկ իրավիճակներ (անհատական եւ խմբային): Այդ իրավիճակներուն ժամանակ դաստիարակը հարցերու, առաջադրանքներու, խաղերու միջոցով երեխաներուն պիտի ներգրաւէ ազատ հաղորդակցութեան մէջ: Հաղորդակցութեան ճանապարհով ալ կը հարստանայ երեխաներուն բառամթերքը եւ պայմաններ կը ստեղծուին հայերէն մտածելու, խօսելու եւ հասկնալու համար:

Երեխային բառամթերքը հիմնականին մէջ պէտք է հարստացնել շրջապատի մարդոց խօսքի ընդօրինակումի, գեղարուեստական խօսքի ունկնդրութեան, ինչպէս նաեւ անոնց վերարտադրութեան ճանապարհով: Այս ճանապարհով նաեւ կը ձեւաւորուի եւ կը զարգանայ երեխաներուն հնչիւնային լսողութիւնը, կ'ընդլայնուին շրջապատի մասին անոնց գիտելիքները, կը ձեւաւորուի հայեցի լեզուամտածողութիւն, կը դրուին ազգային հոգեկերտուածքին հիմքերը:

Այսպէս, «ԿՈԿՈՆ» խումբին մայրենի լեզուի դասապահերը պէտք է նպաստեն.

- երեխաներու հոգեկան գործընթացներու զարգացումին,
- խօսքի զարգացումին,
- ինքնաձանաչումին եւ շրջակայ աշխարհի՝ բացայայտումին,

- 
- կենցաղային-աշխատանքային տարրական կարողություններու ձեւաւորումին եւ զագացումին, «ես ինքս» տարիքին յատուկ ձգտումներու բաւարարումին,
 - աշխարհը ծանօնալու համար որոշակի տարրական կարողություններու ձեւաւորումին եւ զարգացումին,
 - տառաձանաչութեան եւ կարդալու տարրական կարողություններու ձեւաւորումին:

1. ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1.1 ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

• Շրջակայ աշխարհը ներկայացնող առարկաներու, երեւոյթներու, յարաբերութիւններու մասին երեխաներուն գիտելիքներու եւ պատկերացումներու ձեւաւորման ճանապարհով երեխաներուն բառամթերքը հարստացնել համապատասխան բառերով եւ արտայայտութիւններով, առարկայի յատկանիշ եւ առարկայի գործողութիւն ցոյց տուող բառերով:

• Սորվեցնել ճիշդ գործածել ընդհանրացնող անունները՝ խաղալիք, սնունդ, կահոյք, հագուստ, պտուղ, բանջարեղէն, եւ այդ խումբերուն մէջ մտնող առարկաներուն անուանումները:

• Ձեւաւորել օրուան ժամերը (*օր, առաւօտ, գիշեր, ցերեկ, կէսօր*) եւ *երէկ, այսօր, վաղը* բառերուն իմաստը հասկնալու եւ խօսքին մէջ ճիշդ գործածելու կարողութիւններ:

• Բնութեան երեւոյթներուն ծանօթացնելու ճանապարհով զարգացնել անոնց անունները ճիշդ արտաբերելու եւ խօսքին մէջ տեղին գործածելու կարողութիւնը. *գարուն, ամառ, աշուն, ձմեռ*, եղանակը՝ *ցուրտ, տաք, զով, քամի, անձրեւ, ձիւն, կարկուտ*:

• Գաղափար տալ մեծերուն հետ բարեկիրթ հաղորդակցելու ձեւերուն մասին (*Դուք, Ձեր, Ձեզ...*) եւ մշակել մեծերուն հետ քաղաքավարի հաղորդակցելու տարրական կարողութիւններ:

• Սորվեցնել բարեկիրթ հաղորդակցման ձեւեր («հրաշալի բառեր»). *բարեւ Ձեզ, բարի օր, ցտեսութիւն, շնորհակալութիւն, հաճիք (հաճիս), կը ներէք...*:

• Սորվեցնել ամսուայ եւ շաբաթուայ օրերուն անունները:

• Սորվեցնել երեխաներուն ծանօթ մասնագիտութիւնները:

րու անուններ, ձեւաւորել անոնց շուրջ պարզ նախադասութիւններ կազմելու կարողութիւն (բժիշկ, դերձակ, ուսուցիչ, կօշկակար, հացթուփ, փռապան - Դերձակը հագուստ կը կարէ: Բժիշկը կը բուժէ: Կօշկակարը կօշիկ կը կարէ, եւ այլն):

1.2. ԿԱՊԱԿՑՈՒԱԾ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Շարունակել խօսքի զարգացումի ուղղութեամբ «ԲՈՂ-ԲՈՋ» խումբին մէջ իրականացուած աշխատանքները՝ ստեղծելով որքան հնարաւոր է աշխոյժ խօսքային միջավայր:

- Երեխաներուն սորվեցնել խօսիլ ամբողջական նախադասութիւններով, ինքնուրոյն կամ դաստիարակին օգնութեամբ ընտրելով եւ գործածելով 2-3 բառ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Որքան ալ որ կը կարեւորուի խօսքային միջավայրին առկայութիւնը, անհրաժեշտ է չմոռնալ, որ խօսիլ կը սորվին խօսելով. երեխային պէտք է շատ խօսեցնել, այդ նպատակով ստեղծելով խօսքային-զգացմունքային միջավայր: Այսինքն՝ ստեղծել այնպիսի իրավիճակ մը, բծախնդրօրէն մշակուած հարցաշարով, բառամթերքով խօսիլ այնպիսի նիւթերու, թեմաներու շուրջ, որ երեխային մէջ յառաջանան դաստիարակին, տարեկիցներուն խօսքով արձագանգելու՝ խօսելու բնական մղում:

• Ձեռնարքել եւ զարգացնել ունկնդրուած փոքրիկ պատմութիւնը ուշադրութեամբ ըմբռնելու, հասկնալու եւ բովանդակութեան շուրջ ուսուցիչին տուած հարցերուն պատասխանելու պարզ կարողութիւն:

• Սորվեցնել 1-2 անգամ օրիորդին ընթերցումէն յետոյ վերապատմել փոքրածաւալ հեքիաթի մը կամ պատմըւածքի մը բովանդակութիւնը, երեխաներուն օգնելու համար տալով օժանդակ հարցեր:

• Զարգացնել նկարը դաստիարակի հարցերու (մինչեւ տարեվերջ պակսեցնելով ուսուցիչին մասնակցութիւնը) օգնութեամբ ուշադիր դիտելու, անոր բովանդակութիւնը հասկնալու (ովքեր կամ ինչեր պատկերուած են նկարին մէջ, ինչ կ'ընեն անոնք նկարին մէջ եւ այլն) եւ այդ մասին 2-3 նախադասութեամբ պատմելու կարողութիւններ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Այս տարիքի երեխաներուն համար ընթերցող ստեղծագործութեան մէջ պէտք է պատմուի միայն մէկ դէպքի մը մասին, որուն կը մասնակցին 1-2 մարդ: Պատմելու համար տրուող հարցերը պիտի ըլլան ոչ ընդարձակ նախադասութիւններով եւ պարունակեն այն բանալի բառերը, որոնք փոքրիկները պիտի գործածեն ուսուցիչին հարցումներուն պատասխանելու համար:

• Զարգացնել խաղի ժամանակ (խաղալիքներով կամ երեւակայական) խօսելու, պատմելու, խաղալիքներու հետ զրուցելու (*ի՞նչ պիտի ընեն, իսկ հիմա ես կը շարեն խորանարդիկները, ես ասոր տակ կը դնեն մեծը, որպէսզի չփլի, եւ այլն*), իրենց ընտրած քայլերը հիմնաւորելու, պատճառաբանելու, պատճառահետեւանքային կապերով զանոնք հիմնաւորելու (*ինչու այդպէս ըրի*) երեխաներուն կարողութիւնները:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Այս տարիքի երեխաները տակալին չեն կրնար առանց մեծի մը օգնության խաղալ իրադրային խաղեր: 4-5 տարեկան երեխան խաղընկեր կը փնտոէ ոչ միայն տարեկիցներուն մէջ. մեծահասակը այս տարիքին պիտի դառնայ փոքրահասակին խաղընկեր՝ խաղալ սորվեցնելով անոր:

- Ձեւաւորել իր ամէնօրեայ գործածական խաղալիքներուն մասին փոքրիկ պատմութիւններ յօրինելու կարողութիւն՝ օգնելով, յուշելով անոնց գործողութիւնները մարդոց գործողութիւններուն նմանցնելու, համապատասխան բանաձեւերը ընտրելու հարցին մէջ:

- Հարցազրոյցի միջոցով ձեւաւորել իր առօրեային, ընտանիքին եւ անոր անդամներուն, անոնց զբաղումներուն, ընտանեկան տօներուն մասին քանի մը նախադասութեամբ պատմելու ունակութիւն (օրինակ՝ *ինչպէս անցաւ հանգրստեան օրը, ինչպէս նշեցինք իմ տարեդարձիս օրը* եւ այլն):

- Կազմակերպել պարզ բեմականացումներ՝ զանոնք ցուցադրելով մանկական հանդէսներու, ազգային տօներու ժամանակ:

1.3 ՀՆՉՈՒՆԱՅԻՆ ԼՍՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Զարգացնել երեխաներու ճայնային կառոյցը /բերան, կոկորդ, ճայնալարեր /, խօսքային շնչառութիւնը / խօսելու ժամանակ ձիշտ շնչել/:

- Մշակել եւ զարգացնել հայերէնի հնչիւնները մաքուր, յստակ, արեւմտահայերէնի հնչերանգով արտասանելու երեխաներուն ունակութիւնը:

• Սորվեցնել լսել եւ արտասանել դաստիարակի կողմէն առաջարկուած բառերը եւ որոշել, թէ ինչ կը լսուի բառին սկիզբը:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխաներու հնչիւնային լսողութեան զարգացումին ուղղութեամբ աշխատանք տարած ատեն պէտք է նկատի ունենալ, որ երեխաները լաւ կը լսեն եւ կը մտապահեն նախ բառին առաջին հնչիւնը, յետոյ՝ վերջինը, ապա՝ բառամիջինը: 4-5 տարեկաններուն հնչիւնային լսողութեան զարգացումին ուղղութեամբ աշխատած ատեն շահեկան է նախ սորվեցնել լսել, որոշել բառին առաջին հնչիւնը եւ արտաբերել զայն:

• Երեխաներուն գործնականօրէն ծանօթացնել (անընդհատ արտասանել այդ բառերը) *բառ, հնչիւն, կը հնչէ* բառերուն՝ զանոնք յաճախակի գործածելով երեխաներուն հասցէագրուած խնդիրներուն մէջ: Օրինակ, «Ինչ կը լսէք բառին սկիզբը», «Ինչ հնչիւն կ'արտասանուի բառին սկիզբը» եւ այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան գիտէ իր շրջապատը գտնուող բոլոր առարկաներու եւ տեղի ունեցող երեւոյթներուն անունները, կրնայ զանոնք գործածել խօսքին մէջ:

2. Կը ծանչնայ մանկապարտէզին անձնակազմը անուններով եւ գիտէ այն բառերը, որոնք կը ներկայացնեն անոնց զբաղումները:

3. Քանի մը վայրկեան ուշադիր կը լսէ ուսուցիչին խօսքը, կը հասկնայ մէկ միտքէն կազմուած նախադասութիւնը, կ'ըմբռնէ եւ անհրաժեշտութեան պարագային կը վերարտադրէ լսածը կամ կը կատարէ յանձնարարութիւնը:

4. Կրնայ խօսիլ իր խաղալիքներուն մասին, կը հաղորդակցի խաղընկերներուն հետ:

5. Կը պատմէ ունկնդրած փոքրածալ պատմութեան, դիտած նկարին բովանդակութիւնը, գործածելով նաեւ դատողական միտքեր:

6. Կ'արտասանէ փոքրի բանաստեղծութիւններ, շուտատելուկներ:

7. Յստակօրէն կ'արտասանէ ծանօթ բառերը, կը հասկնայ անոնց իմաստը:

8. Քանի մը անգամ բառը արտասանելէն յետոյ (առաջին հնչիւնը երկնցնելով) կրնայ որոշել բառին առաջին հնչիւնը:

1.4 ԽՕՍՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

• Սորվեցնել բառը նախադասութեան մէջ քերականօրէն ճիշդ հոլովել (գործնական ճանապարհով)՝ որպէս շտկումի ձեւ ներկայացնելով սեփական խօսքին նմոյշը:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երբ երեխան կը խօսի, կը պատմէ (առաւել եւս ոգեւորուած, յուզուած), կարելի չէ ընդհատել անոր խօսքը՝ ուղղելու համար անոր թոյլ տուած սխալները: Անհրաժեշտ

է համբերատար կերպով սպասել,
որպէսզի ան աւարտէ իր խօսքը, ետքը
շտկել երեխային թոյլ տուած սխալը՝ անոր
եւ ողջ խումբին կրկնել տալով բառին
գործածութեան ճիշդ ձեւը:

- Զարգացնել պարզ (միայն ենթակայ եւ ստորոգիչ) եւ պարզ ընդարձակ (ենթակայ, ստորոգիչ եւ լրացումներ) նախադասութիւններ կազմելու, աւարտուն միտք արտայայտելու երեխաներուն կարողութիւնները:

- Սորվեցնել ճիշդ կառուցել եւ խօսքին մէջ գործածել գոյականին եզակի եւ յոգնակի ձեւերը, բային հրամայական (նկարէ, վերցուր, երգէ), ինչպէս նաեւ անոնց յոգնակի ձեւերը (վերցուցէք, դրէք, թոյլ տուէք եւ այլն) մեծերուն հետ խօսած ատեն գործածելը:


- Ձեւաւորել խօսած ատեն օժանդակ բայերը եւ կը մասնիկը բայերուն հետ համաձոյլ արտասանելու կարողութիւն:

- Մշակել տարեկիցներուն խօսքային սխալները նկատելու եւ շտկելու երեխաներուն ունակութիւնները:

ՉԱՓՈՐՈՒՄԻ ՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ իր մտքերը արտայայտել քերականօրէն ճիշդ կազմուած նախադասութիւններով, պահպանելով ինչպէս հոլովական վերջաւորութիւնները, այնպէս ալ թիով եւ դէմքով բառերուն համաձայնութիւնը միմիանց հետ (երեխաները գացին, մատիտս տուէք, ծաղիկը բացւեցաւ եւ այլն):

2. Խօսած ատեն օժանդակ բայերը եւ կը մասնիկը կ'արտասանէ բային հետ համաձոյլ:



3. Խօսքին մէջ կը գործածէ ինչպէս պատմողական եւ հարցական, այնպէս ալ հրամայական եւ բացազանչական նախադասութիւններ (Սա մեր տունն է: Աո այս գիրքը: Վայ, այս ինչ գեղեցիկ զգեստ է):

2. ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2.1 ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Սորվեցնել ուշադրությամբ կեդրոնանալ դաստիարակին պատմածին, ընթերցածին, բացատրածին, յանձնարարության վրայ /3-5 վայրկեան/:

- Ձեւատրել որեւէ առաջադրանքի կատարումին համար 5-7 վայրկեան կեդրոնանալու, առաջադրանքը մինչեւ վերջ ուշադրությամբ կատարելու ունակութիւն:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

4-5 տարեկան փոքրիկներուն համար դիւրին չէ 5-7 վայրկեանէն աւելի ուշադրութիւնը կեդրոնացնել որեւէ գործողութեան վրայ, մանաւանդ այն առաջադրանքներուն վրայ, որոնք իրենք չեն ընտրած, կամ ալ անոնց կատարումը կը պահանջէ այնպիսի կարողութիւն, որոնց իրենք տակաւին չեն տիրապետեր: Ուստի, որեւէ առաջադրանք տուած ժամանակ պէտք է նկատի ունենալ, թէ ինչը երեխաները կրնան ընել, ինչը պէտք է նոր սորվին: Բնականաբար, առաջադրանքին անձանօթ բաժինը պէտք է աւելի (բաւականին) փոքր ըլլայ, քան ծանօթը:

- Սորվեցնել ուշադիր դիտել օրիորդին ցուցադրած առարկաները, անուանել զանոնք, նկատել անոնց նմանութիւնները եւ տարբերութիւնները եւ արտայայտուիլ

անոնց մասին համապատասխան բառերով: Օրինակ՝ ինչով կը տարբերին իրարմէ քաղաքը եւ հաւր, բազմոցը եւ բազկաթոռը, տունի հեռաձայնը եւ բջջային հեռաձայնը եւ այլն:

2.2 ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Ձեւաւորել եւ զարգացնել նախապէս տեսածը, լսածը, զգացածը, ապրածը յիշելու, այս մասին խօսելու, պատմելու երեխայի ունակութիւնները:

- Սորվեցնել յիշել եւ վերարտադրել անցած փոքրիկ (1-2 տողերու ընդմէջէն) բանաստեղծութիւնները, շուտասելուկները, երգերը, վերյիշել պատմութիւններու գործող անձերը կամ այլ կերպարները («ի՞նչ էին երեք խոզուկներուն անունները», «ո՞վ մեծ մայրիկին կարկանդակ տարաւ») անունները:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Յիշողութեան զարգացումի գործընթացին հիմքը ուշադրութիւնն է: 4-5 տարեկան փոքրիկը իր ուշադրութիւնը կը կեդրոնացնէ այն առարկաներուն վրայ, որոնք գունեղ են, պայծառ են, այն երեւոյթները, որոնք անոր հասկնալի են, ծանօթ են, տպաւորիչ են, այն խօսքին վրայ, որ արտայայտիչ է, հասկնալի է, ջերմ է: Իսկ եթէ այս ամէնը կը զուգորդուին գունեղ, պայծառ, ճաշակաւոր, տպաւորիչ ձեւերու ճիշդ կազմակերպուող ցուցադրումներով, երեխայի յիշողութեան մէջ այս բոլորը կը տպուին աւելի խորունկ:

- Ձեւաւորել դասապահերէն յետոյ եւ օրուան վերջաւո-

րութեան մանկապարտէզին մէջ սորվածը յիշելու, կրկնելու, Շաբաթ, Կիրակի կամ ուրիշ օր մը տան մէջ անցուցած ժամանցին, տեղի ունեցած ուշագրաւ դէպքերուն մասին մտաբերելու եւ խումբին մէջ տարեկիցներուն առջեւ այդ մասին բարձրաձայն եւ ամբողջական նախադասութիւններով պատմելու երեխաներուն կարողութիւնները:

- Զարգացնել առարկաներուն տեղերը, արտասանած բառերու (2-3 բառ), տրուած նաշխերուն (2-3 նաշխ) յաջորդականութիւնը յիշելու (օրինակ, տրուած յաջորդականութեամբ դասաւորել կարմիր, դեղին, կապոյտ շրջանները) երեխաներուն կարողութիւնները:

2.3. ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Սորվեցնել պատկերացնել՝ երեակայել այն, ինչը այդ պահուն չեն տեսներ եւ պատմել իրենց «տեսածը» (օրինակ՝ անձրեւի, ծովուն ալիքներուն, ամպրոպի, կարկուտի ձայները, «տեսնել» փաթիլներուն պարը, գունաւոր փուչիկներ, երազ տեսնել՝ առանց քնանալու (աչքերը գոց), օրինակ՝ երազին մէջ «տեսնել» երեք խոզուկները եւ այլն):

- Ձեւաւորել երեակայական խաղալիքներով խաղալու, անոնց հետ խօսելու, անոնց դերերը ներկայացնելու կարողութիւն (օրինակ, աթոռներով կառուցել գնացք, առանց ջուրի եւ օձառի պուպրիկը լոզցնել, առանց դրամի (թուղթի կտորներով) գնում ընել, եւ այլն):

- Սորվեցնել ըստ երեակայածին նկարել, նախապէս տանելով նախապատրաստական աշխատանք. նախ պատմել՝ ինչ «տեսայ», «ինչ պիտի նկարեմ», ապա՝ թուղթին նոր յանձնեն:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

4-5 տարեկան փոքրիկը կրնայ երեակայությամբ պակերացնել հիմնականին մէջ այն, ինչ տեսած է, զգացած է: Սակայն չի բացառուիր, որ խումբին մէջ կրնան ըլլալ երեխաներ (թիւով ոչ շատ), որոնք կրնան երեակայել նոյնիսկ այն, ինչը չեն տեսած, պարզապէս լսած են այդ մասին: Կը նշանակէ, որ երեխաներուն երեակայությամբ նկարել կամ պատմել յանձնարարելէն առաջ պէտք է յիշողութեան մէջ թարմացնել տպաւորութիւնները (հարցերու եւ առաջադրանքներու միջոցով):

- Ձեւաւորել եւ զարգացնել առարկաներու անաւարտ նկարները ծանչնալու եւ անոնց անուններ ըսելու, կիսատ ձգած մասը ամբողջացնելու երեխաներուն կարողութիւնները:

2.4. ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Զարգացնել երեխաներուն հինգ զգայարանները՝ զանոնք օգտագործելով ծանօթ առարկաները, նիւթերը, կենդանի եւ անկենդան աշխարհը, առարկաներուն հոտերը, գոյները, կարծրութեան կամ փափկութեան աստիճանը եւ այլ առանձնայատկութիւնները ուսումնասիրելու համար:

- Մշակել եւ զարգացնել առարկաներուն, դէպքերուն, երեւոյթներուն օրինաչափութիւնները եւ հակասութիւնները, պատճառա-հետեւանքային կապերը (օրինակ՝ *Ամպերը կը գոռան, ուրեմն՝ պիտի անձրեւէ: Տաք է, ուրեմն՝*

կայրէ: Ուոքիս տակ չեմ նայիր, կրնամ իյնալ: Ձեռքերը չլուաց, կը նշանակէ մաքրասէր չէ: Ընկերոջս հրեցի, ան ինձմէ կը նեղուի: Ապակեայ է, եթէ իյնայ, կը կոտորուի) որոշելու երեխաներուն կարողութիւնը:

- Սորվեցնել փոքրիկ կենսափորձէ ելլելով՝ տրամաբանական պարզ եզրակացութիւններ, դատողութիւններ ընել՝ գործածելով *եթէ-ապա, որովհետեւ-ատոր համար* եւ նման այլ շաղկապեր:

- Ձեւաւորել եւ զարգացնել քննադատական (քննական) վերլուծութիւն ընելու երեխաներու ունակութիւնը (վերլուծել լսած պատմութիւններուն, հեքիաթներուն կերպարներու գործողութիւնները, դիտարկել ճիշդը եւ սխալը, ներկայացնել իր սեփական գործողութիւնները այդ պարագային. «ես այդպէս չէի ըներ»):

- Զարգացնել առարկաները համեմատելու, տարբերութիւնները եւ ընդհանրութիւնները գտնելու, մասերու բաժնելու, առարկաները ըստ ընդհանուր յատկանիշերու խմբաւորելու երեխաներուն կարողութիւնները (*փայտեայ է, ապակեայ է, կերպասէ է, մետաղեայ է* եւ այլն):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխան աշխարհը կը ծանչնայ իր 5 զգայարաններով. **համը,**

տեսողութիւնը, լսողութիւնը,

հոտառութիւնը, շօշափելիքը:

Երեխայի գործունէութեան ընթացքին այս հինգ զգայարաններուն

գործածութիւնը, անոնց զարգացումը, շրջապատող միջավայրին մէջ եղած նիւթերը եւ երեւոյթները ծանչնալը,

անոնց մասին պատմելը կը

նպաստեն երեխաներուն

տրամաբանութեան եւ

մտածողութեան զարգացումին:
Այս երկուքը եւս շատ կարեւոր են:

- Սորվեցնել դիտարկել առարկաները, բնութեան երեւոյթները եւ բացատրել անոնց պատճառները ոչ միայն ունեցած տեղեկութիւններուն հիման վրայ, այլ փորձել ենթադրել, տրամաբանել, գուշակել:
- Զանազան գունաւոր միանման առարկաները համրելով՝ սորվեցնել արտասանել 1էն 10 թիւերը՝ բացատրելով անոնց ճիշդ արտասանութիւնը (1-8 թիւերը կ'արտասանուին առանց ը-ի. մէկ, երկու, երեք, եւ այլն, իսկ 9 եւ 10 թիւերը՝ ինը, տասը):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխայի ողջ գործունէութեան (ոչ միայն ուսումնական) արդիւնաւետութիւնը կը պայմանաւորուի անոր հոգեկան գործընթացներու, մասնաւորապէս՝ ուշադրութեան, յիշողութեան, մտածողութեան, երեւակայութեան զարգացումի մակարդակով: Այս գործընթացները կարելի է զարգացնել՝ երեխաներու բոլոր գործողութիւններուն մասնակից դարձնելով անոնց 5 զգայարանները:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ 5-7 վայրկեան լսել դաստիարակին, ընկերոջը, կեդրոնանալ որեւէ գործողութեան վրայ (նկարել, ծեփել, գրել (3-5 վայրկեան), կտրել, փակցնել, եւ այլն):
2. Կրնայ առարկաները կամ առարկայական նկարները

դասդասել ըստ ընդհանրացուած անուններու (պտուղ-բանջարեղէն, կահոյք-հագուստ, խաղալիք-գրեճնական պիտոյք):

3. Կրնայ ուսուցիչին հրահանգով ուշադրութիւնը գործողութենէ մը կտրել եւ **աստիճանաբար** տեղափոխել մէկ այլ գործունէութեան ոլորտ:

4. Երեխան կրնայ յիշողութեամբ վերականգնել եւ նկարագրել տեսածը, պատմել ապրած իրավիճակները, իր եւ իրեն հետ անմիջականօրէն կապ ունեցող մարդոց գործողութիւնները:

5. Կը յիշէ եւ անգիր կ'արտասանէ նախ 1-2, ապա՝ 2-4 տողերով բանաստեղծութիւնները, շուտասելուկները, կրնայ երաժշտութեան միջոցով յիշել եւ երգել փոքրածաւալ, պարզ բովանդակութիւն (կրկնուող տողերով) եւ մատչելի երաժշտութիւն ունեցող երգեր:


6. Կը յիշէ (ընդհանուր գիծերու մէջ), թէ ինչ ըրին տուեալ դասապահի ընթացքին, ինչ ըրած են այսօր եւ այդ մասին կրնայ հաղորդել մօրը, պատմել տունը:

7. Երեխան կրնայ դաստիարակին նկարագրելով, պատմելով, անցածը յիշեցնելով երեւակայել՝ պատկերացնել եւ բառերով նկարագրել, ապա՝ երեւակայածը նկարել:

8. Կը խաղայ երեւակայական խաղալիքներով, անոնց հետ երկխօսութիւններու մէջ կը մտնէ, պատմութիւն կը հիւսէ (յօրինէ) իրեն քաջ ծանօթ խաղալիքներուն եւ իրերուն շուրջ:

9. Կը ճանչնայ ծանօթ առարկայի անաւարտ նկարը, երեւակայութեամբ կ'ամբողջացնէ զայն եւ կ'ըսէ, թէ որ մասը կը պակսի:

10. Երեխան կը կատարէ տրամաբանական, պատճառահետեւանքային կապեր ներկայացնող պարզ եզրահանգումներ (*ես բոպիկ պտտեցայ, ատոր համար ալ կոկորդս կը ցաի*):



11. Կրնայ դասդասել առարկաները ըստ նիւթի (*փայտեայ, ապակեայ, ...*), ըստ չափի (*մեծ է, միջակ է, փոքր է*), ըստ օգտագործման ձեւի (*կ'ուտեն հում կամ եփած*), ըստ ընդհանրացնող անունների (*պտուղ, բանջարեղէն, կահոյք, կենդանի*):

12. Կը հասկնայ ունկնդրած հեքիաթին, պատմուածքին, դիտած նկարին մէջ ներկայացուած դէպքերու, կերպարներու գործողութիւններու հակասութիւնները, կը կառուցէ քննադատական խօսք եւ իր սեփական վարքին վերաբերեալ դատողութիւններ կ'ընէ (*Կարմիր գլխարկիկը չլսեց մօրը: Ես իմ մօրս կը լսեմ*):

14. Կրնայ համրել մէկէն տասը, ուսուցչուհիին խնդրանքով, սեղանէն վերցնել եւ անոր տալ 2 մատիտ, 1 գրիչ, 3 շաքար, եւ այլն:

3. ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՅՈՒՋԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

3.1. ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՐԱԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

- Խումբին մէջ ստեղծել ժողովրդավարական, համագործակցային միջավայր՝ նպաստելով լսելու, քննարկելու, լուծումներ գտնելու, հանդուրժողականութիւն եւ ապրումակցում դրսեւորելու, ազատ հաղորդակցելու ընկերային որակներ:

- Սորվեցնել լսել ընկերներուն խնդիրները, օգնութեան ձեռք մեկնել անոնց, խորհուրդներ տալ (ընկերը մատիտ չունի՝ տալ, նախաձաշիկէն բաժին հանել՝ բաժնեկցիլ, հիւրասիրել, դաստիարակին աթոռ տալ, անոր ձեռքէն ինկած իրը բարձրացնել, մեծին ճամբայ տալ եւ այլն): Նմանօրինակ վարք դրսեւորել նաեւ տունը՝ հարազատներուն եւ մտերիմ մարդոց շրջանակին մէջ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ընկերային, հանդուրժողական, համագործակցային փոխ-յարաբերութիւններու կառուցումի առաջին միջոցը ընդօրինակումն է: Դաստիարակին վերաբերմունքը օրինակ պէտք է ըլլայ երեխաներուն համար: Ան ոչ միայն պիտի դրսեւորէ փոխօգնութեան որակներ երեխաներուն, այլեւ միջավայրի՝ գործընկերներու, ծնողներու նկատմամբ, եւ երեխաներուն ուշադրութիւնը գրաւէ այդ երեւոյթին վրայ

(ինչպէս իր կողմէն, այնպէս ալ միմիանց նկատմամբ երեխաներու դրսեւորած, ցուցաբերած օգնութիւնը ի ցոյց դնել, գնահատել եւ այլըն):

- Սորվեցնել խօսակցութիւն սկսիլ (զրուցել, հարցերով դիմել) մեծերուն հետ՝ պահպանելով բարեկիրթ վարքի կանոնները (դրացիի, բժիշկի, խանութպանի, վաճառորդուհիի, խմբասենեակ մտած մանկապարտէզի աշխատակիցի, հիւրի եւ այլնի հետ):

- Ձեւաւորել եւ զարգացնել խմբային (կամ զոյգերով) խաղալու, ինչպէս խումբին, այնպէս ալ անձանօթ երեխաներու հետ խաղի մէջ մտնելու եւ ոչ միայն ունկնդիր, դիտող, այլեւ աշխոյժ մասնակից, կազմակերպիչ՝ ինքզինք դրսեւորելու կարողութիւններ:

- Սորվեցնել եւ զարգացնել փոքր խումբով (կամ զոյգերով) խաղալու, ինչպէս խումբին, այնպէս ալ անձանօթ երեխաներու հետ խաղի մէջ մտնելու եւ ոչ միայն ունկնդիր, դիտող, այլեւ աշխոյժ մասնակից, առաջնորդ (*լիտըր*) իրեն դրսեւորելու կարողութիւններ:

- Սորվեցնել *ընկեր* բառը եւ *ընկերութիւն* *ընել*, *իմ ընկերս է*, *դուն իմ ընկերս ես*, *ես քու ընկերդ եմ* արտայայտութիւնները եւ նախադասութիւնները եւ համարժէք վարք:

- Ձեւաւորել եւ զարգացնել խումբին կանոնները ծանչնալու, ընդունուած կարգ ու կանոնին գիտակցօրէն ենթարկուելու, նաեւ ընկերներէն բարութեամբ պահանջելու կարողութիւններ:

3.2. ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՅՈՒԶԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

- Սորվեցնել անհրաժեշտության պարագային անուն, մականունով ներկայանալ եւ այլ անհրաժեշտ տեղեկութիւններ հաղորդել իր մասին. ծնողքին անուն-մականունը, եղբոր, քրոջ անունները, տեղեկութիւններ մեծ հայրերուն, մեծ մայրերուն եւ այլ մերձաւորներուն մասին:

- Սորվեցնել ծանօնալ ինքզինք, իր արժէքները եւ շնորհները (*ես լողալ գիտեմ, ես կը նկարեմ, կ'արտասանեմ, ես կը սիրեմ զբաղիլ ծեփելով, ես հիսել գիտեմ եւ այլն*), ներկայացնել եւ գնահատել սեփական արժանիքները՝ արժեւորել ինքզինք:


- Ձեւաւորել որեւէ յանձնարարութիւն, առաջադրանք անտրտունջ, սիրով ընդունելու եւ զանոնք խանդավառութեամբ կատարելու ձգտում եւ ունակութիւն:

- Ձեւաւորել սեփական անձին եւ այլոց նկատմամբ յարգանք, բարձր ինքնագնահատական (ոչ ամբարտաւան կեցուածք), անկաշկանդ, բայց յարգանքով սեփական կարծիքը յայտնելու, ուրիշներուն կարծիքը (եթէ նոյնիսկ տարբեր է սեփական կարծիքէն) անխռով լսելու եւ իր տեսակէտը բարեկիրթ ներկայացնելու ունակութիւններ:

- Ձեւաւորել ուրիշներուն յուզական ապրումները զգալու, հասկնալու, ապրումակցելու, սեփական զգացումները դիմախաղերով եւ բառերով արտայայտելու (*նեղուեցայ, տխրեցայ, կարօտցած եմ, մայրիկս կ'ուզեմ, անհանգիստ եմ, շատ գեղեցիկ է, ինչ համեղ է, ամօթ է, հետաքրքրական է, դուն շատ բարի ես եւ այլն*) կարողութիւններ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Դիմախաղերը եւ մարմնարտայայտչական շարժումները լաւագոյն ձեւով եւ առաջին հերթին



կը ներկայացնեն երեխայի յուզական վիճակը: Այս վիճակները կրնան անոր բնորոշ ըլլալ ընդհանրապէս կամ միայն որոշակի իրավիճակի՝ դէպքի արդիւնք ըլլալ:

Հետեւաբար, պէտք է չափազանց ուշադիր ըլլալ երեխային անմիջական շարժումներուն նկատմամբ, արձագանգելով անոր յուզականութեան՝ հետաքրքրուիլ անոր ապրումներով, մղել անոր խօսիլ, պատմել իր հոգսերուն, մտահոգութիւններուն մասին եւ ցոյց տալ, որ ինք առանձին, մինակ չէ, որ իրեն կը հասկնան եւ անկախ անորմէ, թէ ով է մեղաւորը, միշտ իր կողքին են:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան անհրաժեշտութեան պարագային կ'օգնէ իր ընկերներուն (կ'առաջարկէ, կ'ընդունի ուրիշներուն օգնութիւնը, կը հաղորդակցի անոնց հետ զինք յուզող հարցերով):

2. Խումբին մէջ ունի խաղընկերներ, կը ձգտի անոնց հետ յարաբերութիւններ հաստատել (ընկերութիւն ընել), կը պահպանէ խումբին մէջ ստեղծուած կարգը եւ կանոնները, կը հետեւի այդ հարցին մէջ նաեւ ընկերներուն:

3. Գիտէ իր եւ ծնողներուն անունները, մականունը, կրնայ պարզ տեղեկութիւններ յայտնել անոնց մասին:

4. Ուշադիր կը լսէ իրեն տրուած յանձնարարութիւնները եւ աշխատանքի մէջ կը ներգրաւուի խանդավառութեամբ:

Եամբ, կրնայ նշել ընտանիքի եւ իր ձեռքբերումները (*հայրիկս պարգեատրուեցաւ, մայրիկս շատ գեղեցիկ մազեր ունի եւ այլըն*):

5. Ունի որոշակի պարտականութիւններ ստանձնելու եւ կատարելու ծգտումներ:

6. Կրնայ ներկայացնել իր մտահոգութիւնները, յոյզերը, ինչպէս դիմախաղով եւ շարժումներով, այնպէս ալ իր յոյզերուն համապատասխան բառերով:

7. Դէմքին արտայայտութիւններէն եւ շարժումներու միջոցով կը զգայ իր տարեկիցներուն եւ մտերիմ մեծահասակներուն յուզական ապրումները եւ կը դրսեւորէ համարժէք վարք:

8. Գիտէ իր շնորհները, ունի կարծիք յայտնելու, զայն պարզ նախադասութիւններով եւ քաղաքավարի հիմնաւորելու ունակութիւն:

4. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՒ ԱՆՎՏԱՆ ԳՈՒԹԻՒՆ

4.1 ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄԻ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱԴՈՐՈՒՄ

• Սորվեցնել սեփական հոգերը (կոճկել շապիկը, կապել կօշիկներու կապերը, հաւաքել պայուսակը կամ դաստիարակին յանձնարարութեամբ պայուսակէն հանել անհրաժեշտ իրերը, նախաձաշիկը եւ այլն) ինքնուրոյն եւ սիրայօժար հոգալ՝ այդ ոլորտին մէջ օգնել նաեւ տարեկիցներուն կամ իրմէ փոքրերուն:

• Ձեւաւորել անաղմուկ, բերանը գոց ուտելու, կերած ատեն (երբ բերանը լեցուն է) չխօսելու, չշարժելու, շրջապատը չաղտոտելու, թաշկինակ գործածելու, անհրաժեշտութեան պարագային՝ լուացուելու, անձնական մաքրութեան կանոնները պահպանելու կարեւորութեան գիտակցութիւն եւ կարողութիւններ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ցանկացած կարողութեան ձեւաւորումէն առաջ կարելոր է երեխաներուն այդ կարողութեան անհրաժեշտութեան մասին բացատրութիւն տալը՝ հիմնաւորումը: Անհրաժեշտ է հասնիլ այն բանին, որ երեխան գիտակցի, թէ ինչու պէտք է այդպէս վարուի, կամ **ԵՐՔ ԵՅՈՒՄ ԵՄ ԵՐԵՒՄ** չվարուի, ինչ կրնայ պատահիլ: Երբ երեխան կը գիտակցի, կը հասկնայ այս կամ այն կանոնին, օրէնքին անհրաժեշտութիւնը իր

կեանքին մէջ, ան ոչ միայն արագ կը մտապահէ այդ բոլորը, այլեւ կը կիրառէ ու չի մոռնար ողջ կեանքի ընթացքին:

- Ձեւաւորել խմբասենեակը կարգի բերելու (աթոռները դասաւորել, խաղալիքները հաւաքել, տեղը դնել, գրենական պիտոյքը բաժնել եւ հաւաքել, օգնել ուսուցիչի բոլոր հնարաւոր առիթներով), ուսուցիչի յանձնարարութեամբ որեւէ իր բերելու, տեղը դնելու ունակութիւններ:

- Սորվեցնել ըստ անհրաժեշտութեան գործածել **բարի լոյս, բարի կէսօր, բարի երեկոյ, բարեւ ձեզ, հաճիս (հաճեցէք), խնդրեմ, ներողութիւն, շնորհակալութիւն** եւ նման այլ «հրաշալի» բառեր:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Որքան փոքրիկին վրայ շուտ պարտականութիւններ դրուին (անշուշտ, տարիքին համապատասխան), այնքան ան արագ կը հասուննայ որպէս անհատ. երբ երեխային մեծի տեղ կը դնես, ինքզինք մեծ կը համարէ: Մենք այդպէս անոր կ'օգնենք, որ մեծնայ, հասուննայ, խելացի դառնայ, իր գործողութիւններուն համար պատասխանատու մարդ մեծնայ:

4.2 ՎՏԱՆԳՆԵՐԷՆ ՀԵՌՈՒ ՄՆԱԼՈՒ՝ ԱՆՎՏԱՆԳ ԱՊՐԵԼՈՒ ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

- Խմբասենեակին մէջ եւ մանկապարտէզին բակը ստեղծել ապահով, անվտանգ եւ խրախուսող միջավայր

մը՝ օգնելով, որ երեխաները իրենք զիրենք դրսևորեն թէ խումբի անդամներուն, թէ իրենց արարքներուն համար պատասխանատու անձ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխաներու անվտանգ ապրելու, անոնց փորձութիւններէն հեռու պահելու ամէնէն լաւ միջոցը վտանգ ներկայացնող իրերու եւ գործունէութեան ձեւերուն բացառումն է միջավայրին մէջ: **Նախ պէտք է մտածել վտանգը կանխելու, յետոյ երեխային անկէ հեռու պահելու մասին:**

- Ձեւաորել խաղած եւ վազած ատեն վտանգաւոր իրավիճակները կանխատեսելու (թաց է, ուրեմն՝ կը սահիմ, շուն է, ուրեմն՝ կրնայ խածնել, սուր է՝ կրնայ կտրել եւ այլն) եւ ասոնցմէ խուսափելու, որեւէ արտակարգ իրավիճակի մէջ նախ ինքնուրոյն ինքզինքին կամ ընկերներուն օգնելու, ապա աւագներու օգնութեան դիմելու կարողութիւններ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Այս կարողութիւնները հիմք կը դառնան եւ կ'օգնեն երեխային յետագային եւս ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ եւ կարողութիւններ, դառնալ ընկերային խումբին յարգուած եւ լիիրաւ անդամը եւ ապրիլ ոչ արկածախնդիր կեանքով մը:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան ինքնուրոյն կը կապէ իր կօշիկներուն կապերը (քուղերը), կը շտկէ, կարգի կը բերէ իր հագուստները, դաստիարակին յանձնարարութեամբ իր պայուսակէն կը հանէ անհրաժեշտ իրերը (ասոնց շարքին՝ նախաճաշիկը):

2. Կերած ատեն կը դրսեւորէ պատշաճ վարքագիծ մը:

3. Կարգի կը բերէ իր խմբասենեակին իրերը, կը պահպանէ մաքրութիւն, նոյնը կը պահանջէ իր տարեկիցներէն:

4. Կը յարգէ մանկապարտէզին մաքրութիւնը իրականացնող եւ պահպանող, ծառերը եւ ծաղիկները խնամող մարդոց աշխատանքը եւ նոյնը կը պահանջէ տարեկիցներէն:

5. Գիտէ, որ երբ կը հազայ կամ փոնգտայ պէտք է ծածկէ բերանը եւ կը պահպանէ այդ կանոնները, կ'օգտուի թաշկինակէն, անձեռոցէն:

6. Կը տարբերէ վտանգաւոր իրերը, գործողութիւնները եւ գիտէ նմանօրինակ պարագաներու առկայութեան ժամանակ անհրաժեշտ վարքի կանոնները, ունի այդ կանոնները պահպանելու համար անհրաժեշտ կարողութիւններ:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ, ՎԱՂ ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆ

5.1 ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳԻՐՔԻ ՄԸ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

• Սորվեցնել ուշադիր լսել պատկերազարդ փոքրիկ գիրքէն դաստիարակին ընթերցած փոքրիկ պատմութիւններ՝ գուգահեռ դիտելով համապատասխան նկարազարդումները:

• Ձեւաւորել գիրքին մասին խօսած ժամանակ անոր խորագիրը ըսելու, գիրքը ըստ պատկերազարդումի եւ կողքի ձանչնալու երեխաներուն կարողութիւնները:

• Ձեւաւորել եւ զարգացնել պատմութիւնը կամ հեքիաթը լսելէն յետոյ, «ինչի՞ մասին է, որո՞ւ մասին է պատմութիւնը» (ովքեր էին հերոսները, գործող անձինք) հարցումներուն պատասխանելու (ամբողջական նախադասութիւններով) երեխաներու ունակութիւնները:

• Անընդհատ ուսուցիչին բառամթերքի մէջ «հեքիաթ», «բանաստեղծութիւն, ոտանաւոր» եւ «պատմութիւն» բառերը կրկնուելու ձանապարհով երեխաներուն ականջին լսելի, ընկալելի դարձնել այդ բառերը:

• Սորվեցնել 2-3 անգամ լսած պատմութեան կամ հեքիաթին բովանդակութիւնը ներկայացնող նկարները ուշադիր դիտել եւ մտաբերել, թէ բնագիրին որ հատուա-

ծին կը համապատասխանէ նկարը, 1-2 նախադասութիւնով (նախ դաստիարակի հարցումներուն օգնութեամբ, ապա՝ ինքնուրոյն) այդ հատուածը ներկայացնել:

- Սորվեցնել անգիր արտասանել 4-5 մանկական բանաստեղծութիւն:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

4-5 տարեկան փոքրիկին մէջ պէտք է հետաքրքրութիւն ծնի գիրքին նկատմամբ: Այդ նպատակով անոր ձեռքը յաճախ պէտք է մանկական պատկերազարդ գիրքեր տալ եւ նպաստել, որպէսզի ան թերթատէ այդ գիրքը, դիտէ անոր մէջ պատկերուած նկարները, հարցեր ուղղէ անոնց մասին: Այդ գիրքերը սկիզբը պէտք է ըլլան փոքրիկ պատմութիւններ, որոնց բովանդակութիւնը պիտի ներկայացուած ըլլայ միայն նկարներով, իսկ յետոյ՝ մէկ պատմութիւն (փոքրածաւալ) ներկայացնող պատկերազարդ գիրքեր:

- Ձեւաւորել մանկական գիրքեր հաւաքելու, զանոնք դիտելու, պահպանելու, գիրքերուն թղթապանակ ստեղծելու ձգտում:

5.2 ՎԱՂ ԳՐԱՃԱՆԱՀՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ (Բ.ԿԻՍԱՄԵԱԿ)

- Ա. Կիսամեակին /Հոկտեմբեր-Դեկտեմբեր/ երեխաներուն սորվեցնել հայերէնի տառերուն մասնիկները մատիտով գրել, ծանօթութիւն՝ տողերուն, ձեւաւորել անոնց մէջ կողմնորոշուելու կարողութիւն:

• Հետաքրքրություն ձեւաւորել հայերէն այբուբենի, անոր ստեղծողին՝ Մեսրոպ Մաշտոցի նկատմամբ. առաջացնել տառերը սորվելու, ճանչնալու ունակութիւններ, 2-3 տառ ունեցող բառերը ինքնուրոյն կարդալու, անցած (սորված) տառերը չանցած տառերուն մէջ ճանչնալու եւ առանձնացնելու ունակութիւններ:

• Սորվեցնել անցած (սորված) տառերով բառեր կազմել, զանոնք փոխելով նոր բառեր ստանալ (*մատ-մաս, մուր-սուր, սար-կար, տատ-պատ*, եւայլն), բառերը աճեցնել սկիզբէն եւ վերջէն (*նուշ-անուշ, ութ-թութ* եւ այլն), ստանալով նոր բառեր:

• Ձեւաւորել ծանօթ տառերուն օգնութեամբ կազմած բառերը նախադասութեան մէջ (գրատախտակին փակցուած) տեսնելու եւ անծանօթ բառերէն զանոնք առանձնացնելու ունակութիւններ:

• Գաղափար տալ (գործնական ճանապարհով) հայերէնի ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւններուն մասին:

• Սորվեցնել մատիտ բռնել, գծել պարզ գիծեր, գունաւորել ուրուագծուած պատկերները ձախէն աջ գացող շարժումներով:

• Ձեւաւորել որոշակի սահմաններուն մէջ տեղաւորուելու (շրջան, քառակուսի, եռանկիւն, վանդակ, տող), զանոնք գունաւորելու կամ տարբեր նաշխեր ընելու ունակութիւններ:

• Սորվեցնել *ա, ս, մ, պ, ու, կ, ի, ը, է, ն, օ, տ* հնչիւն-տառերը, ձեւաւորել զանոնք ճանչնալու, ուսուցիչին օգնութեամբ այդ տառերով միավանկ բառեր կազմելու եւ կարդալու կարողութիւններ:

• Սորվեցնել ծափերու միջոցով բառը մասերու բաժնել (վանկատել), համրել ծափերուն քանակը եւ գործածել «բառը կազմուած է 2 (3), 1 մասէ» նախադասութիւնը:

• Ձեւաւորել անցած տառերը ծիշդ գրելու ձգտում եւ կարողութիւն («ԿՈԿՈՆ» խումբին մէջ գրել մատիտով):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Նկատի ունենալով այս խումբին երեխաներու տարիքային առանձնայատկությունները գրաձանաչութեան գործընթացը պէտք է իրականացնել աշխոյժ, հետաքրքրաշարժ մթնոլորտի մը մէջ՝ ուսումնական գործունէութեան մէջ երեխաները ներգրաւելով խաղային ձանապարհով:

Գրելու տարրական կարողութեան ձեւաւորումի գործընթացին մէջ պէտք է անընդհատ իրականացուին դադարներ, մատներու մարզանք (մարմնավարժանք): Մինչեւ տատերուն գրելը կատարել նախապատրաստական վարժութիւններ:


ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կը հետաքրքրուի մանկական գիրքերով. կը լսէ փոքրիկ պատմութիւններ եւ պարզ հարցադրումներով կ'արձագանգէ տեղի ունեցող դէպքերուն:

2. Կը դիտէ լսած պատմութեան կամ հեքիաթի նկարազարդումները, կը գուշակէ թէ անոնք որ ստեղծագործութենէն են եւ օրիորդին հարցերուն օգնութեամբ կը ներկայացնէ նկարին համապատասխան հատուածները:

3. Կը յիշէ իրեն ծանօթ հերոսներուն անունները, 1-2 բառով կը բնութագրէ զանոնք (*բարի է, չար է, մօրը չի լսեր, ծոյլ է, եւայլն*):

4. Հետաքրքրութիւն եւ սէր ունի պատկերազարդ գիրքերուն նկատմամբ, դադարներու ժամանակ կամ դաստիարակին թելադրանքով, կը թերթատէ պատկերազարդ գիրքերը, ուշադիր կը դիտէ նկարները եւ միտքեր կը փոխանակէ:



5. Անգիր կ'արտասանէ տարուայ մէջ սորված 4-5 մանկական, փոքրածաւալ բանաստեղծութիւն:

6. Կը հետաքրքրուի հայերէնի տառերով, ունի զանոնք սորվելու ձգտում եւ պարզ ունակութիւններ:

7. Գործնականօրէն կը տարբերէ ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները, կ'որոշէ բառին սկիզբը եւ վերջը լսուող հնչիւնները, մաքուր կ'արտասանէ հայերէնի հնչիւնները:

8. Շարժական տառերով կը կազմէ բառեր (2-3 տառանի), կը կարդայ այդ բառերը:

9. Կը գրէ հայերէնի տառերուն հիմնական մասնիկները, կը կողմնորոշուի տետրակին տողերուն միջեւ:

10. Կը գրէ անցած (սորված) տառերուն ձեռագիրը եւ կը տարբերէ տպագիր տառերէն:

ዓ.
« ስ ለ ጊ ገ ሳ ሃ »
ኮ በ ገ ሆ ዩ



«Ծաղիկ» խումբին մէջ կը կարելորուին եւ կը շարունակուին հայեցի լեզուա-մտածողութեան եւ ազգային հոգեկերտուածքի ձեւաորումի աշխատանքները, անձին զարգացումի եւ յուզականային ոլորտին կատարելագործումի, հնչիւնային լսողութեան զարգացումի, խօսքի ընկալումի, անոր բաղադրիչներու (պատմութիւն/ նախադասութիւն /բառ/վանկ/հնչիւն) տարբերակումի կարողութեան, բառամթերքի հարստացումի, գրաձանաչութեան կազմակերպումի եւ խօսքի քերականական կողմի զարգացումի ուղղութեամբ:

Այս խնդիրներուն լուծման գործընթացը միաժամանակ պիտի նպաստէ՝

- երեխաներու զգայարաններու հոգեկան գործընթացներու զարգացումին,

- ընկերային-մշակութային ինքնաձանաչումին եւ ինքնակողմնորոշումին,

- շրջակայ միջավայրին (կենդանի եւ անկենդան բնութիւն) ծանօթացումին,

- կենցաղային-աշխատանքային գործունէութիւն ծաւալելու ոլորտին մէջ ունեցած կարողութիւններու կատարելագործումին,

- ուսումնական գործունէութեան նախապատրաստումին,

- կարդալու եւ գրելու տարրական կարողութիւններու ձեւաորման:

1. ԲԱՆԱԻՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

1.1. ԿԱՊԱԿՑՈՒԱԾ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՒ ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍՏԱՅՈՒՄ

ա) ԿԱՊԱԿՑՈՒԱԾ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Շարունակել «ԿՈԿՈՆ» խումբին մէջ սկսած աշխատանքները խօսքի զարգացումի ուղղութեամբ՝ չմոռնալով, որ բանաւոր խօսքին կը տիրապետեն միայն խօսելու միջոցով. դաստիարակին, մեծահասակներուն խօսքը երեխային կու տան ճիշդ, գրագէտ խօսքի նմոյշ (օրինակ), որ կը դառնայ երեխայինը եւ կը նպաստէ հայեցի լեզւամտածողութեան ձեւաւորումին, խօսքի զարգացումին՝ միայն այն ժամանակ, երբ երեխան կը կրկնէ մեծերուն խօսքը, անոնց բառամթերքը եւ լեզուական կառոյցները կը դարձնէ իր սեփականութիւնը՝ ներմուծելով սեփական խօսք:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Խօսելու, սեփական միտքերը արտայայտելու համար մարդուն, առաւել եւս՝ մանուկին, առաջին հերթին անհրաժեշտ են խօսելու ցանկութիւն, պահանջ՝ կարիք: Միայն այս պարագային է, որ փոքրիկը կը ձգտի ընդօրինակելու իր ուսուցիչին եւ իր միջավայրի աւագներուն խօսքերը եւ զանոնք կրկնելով, ան կը կառուցէ իր սեփական խօսքը, միտքերը կ'արտայայտէ, կը փոխանցէ իր ապրումները, կը ներկայացնէ կարծիք իր տե-

սածին, լսածին, զգացածին մասին, կը խօսի, կը պատմէ: Այս բոլորին համար անհրաժեշտ է՝

- խօսքային բարենպաստ միջավայր
- զգացումներով, յոյզերով հարուստ մթնոլորտ
- բարեացական վերաբերմունք միմիանց նկատմամբ մանուկներու շրջանակէն ներս, ապահովութիւն եւ յարգանք երեխայի *անձին, անոր կարիքներուն, արտայայտած կարծիքներուն, առաջնութիւններուն եւ արժէքներուն նկատմամբ:*

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՊԱՆՈՒՅՆԵՐԸ.

• Զարգացնել խաղի ժամանակ խօսելու, խաղային գործողութիւնները նախապէս ծրագրելու եւ այդ մասին խօսքի միջոցով ներկայացնելու, սեփական երեւակայութիւններուն մասին պատմելու, խաղալիքներ նկարագրելու, անոնց գործողութիւնները ներկայացնելու (ի՞նչ տեսակի խաղալիք է, ի՞նչ գոյն ունի, ի՞նչ ձեւ ունի, ի՞նչ նիւթէ շինուած է, ինչպէ՞ս կարելի է խաղալ անոնց հետ, ի՞նչ գործողութիւններ կարելի է կատարել, եւայլն) երեխաներուն կարողութիւնները:

• Ամրակայել դիտած պատկերին բովանդակութիւնը՝ նախ դաստիարակին հարցումներուն պատասխանելու միջոցով, ապա առանց այդ հարցումներու երեխաներու պատմելու կարողութիւնը: Սորվեցնել մտածել եւ դատողութիւններ ընել այն դէպքերուն, գործող անձերուն արարքներուն մասին, որոնք պատկերուած են դիտուած պատկերին մէջ: Զեւաւորել դիտուած պատկերին մէջ ներ-

կայացուած դէպքերուն նախորդող եւ յաջորդող դէպքերը երեակայութեամբ պատկերացնելու եւ այդ մասին կապակցուած խօսք կառուցելու կարողութիւններ (ի՞նչ պատահած էր մինչ այս դէպքը, որ պատկերուած է նկարին մէջ, ի՞նչ կրնայ յետոյ տեղի ունենալ, եւայլն):

• Զարգացնել անձնական կեանքին պարզ դէպքերը, փորձը կապակցուած խօսքով ոգեւորուած ներկայացնելու կարողութիւն՝ գործածելով ինչպէս պատմողական, այնպէս ալ նկարագրական, դատողական եւ գնահատող նախադասութիւններ (միտքեր):

• Զարգացնել ունկնդրած պատմութեան, հեքիաթին, առակին բովանդակութիւնը հասկնալու եւ արտայայտիչ ձեւով վերարտադրելու (պատմելու) երեխաներու կարողութիւնը՝ օգտագործելով ստեղծագործութիւններու յենակետային, բանալի բառերը (այսինքն՝ այն կարեւոր բառերը, որոնք տուեալ ստեղծագործութեան հիմնական եւ կարեւոր միտքը կը փոխանցեն):

բ) ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍԱՅՈՒՄ

• Երեխային բառամթերքը հարստացնել՝ բնութեան եւ ընկերութեան երեւոյթներ (ձնհալ, թռչուններու չու, հաշտութիւն, համերաշխութիւն, ներել, եւայլն), առարկայի յատկանիշ (ածական), գործողութիւն (բայ) ցոյց տուող նոր բառերով (ի՞նչ տեսակի է, ուրիշ ի՞նչ տեսակի կրնայ ըլլալ, ի՞նչ կ'ընէ, ուրիշ ի՞նչ կրնայ ընել, ինչպէ՞ս կրնայ ատիկա ընել): Սորվեցնել երեխային այդ բառերը գործածել նախ բառակապակցութիւններու (դեղին տերեւ, չորցած տերեւ), (կը պարէ, գեղեցիկ կը պարէ), ապա՝ նախադասութիւններու

մէջ:

- Կատարելագործել առարկաներու խումբին (մատիտ, գրիչ, վրձին...) ընդհանրացնող անուն տալու (ինչպէս՝ գրենական պիտոյք), առաջարկուող ընդհանրացնող անունին համապատասխան (պտուղ) առարկաներ թուարկելու (ծիրան, խաղող, դեղձ...) երեխաներու կարողութիւնը: Ընդարձակել ընդհանրացնող անուններուն ցանկը (տարուան եղանակներ, ամիսներ, մականուններ, անուններ, երթելու կութեան միջոցներ, մասնագիտութիւններ, եւայլն):

- Զարգացնել երեխաներու ուշադրութիւնը եւ հետաքրքրութիւնը բառին նկատմամբ: Ձեւաւորել անծանօթ առարկաներուն եւ երեւոյթներուն ուշագրաւ (տիպական) անուններ դնելու (նոյնիսկ զուարճալի), ծանօթ (անունը յայտնի) իրերուն եւ երեւոյթներուն նոր անուններ դնելու եւ անոնցմով անկեղծօրէն հրճուելու երեխաներու կարողութիւնները:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխաներու բառամթերքին հարստացումը եւ անոնց յիշողութեան մէջ այդ բառերուն ամրակայումը անհրաժեշտ է իրականացնել բոլոր դասապահերու, շրջակայ աշխարհին վերաբերեալ գիտելիքներու, առօրեայ գործունէութեան ընթացքին:

Ասիկա կը նշանակէ, որ թէ ուսուցիչը, եւ թէ երեխան շրջապատող բոլոր մեծահասակները պիտի ունենան օրինակելի բառամթերք, անթերի գրական խօսք:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կը հասկնայ դաստիարակին, մեծերուն քանի մը քայլէն բաղկացած հրահանգները եւ ճշդութեամբ կը կատարէ զանոնք */Հանեցէք պայուսակներէն ձեր գիրքերը եւ բացէք զանոնք /*:

2. Ուշադիր կ'ունկնդրէ իր հետ խօսակցութեան մէջ մտած դաստիարակին (շրջապատի մարդոց), անհրաժեշտութեան պարագային կու տայ ամբողջական նախադասութիւններով պատասխաններ:

3. Կը կարողանայ պատմել իր խաղերուն մասին, խաղցած ժամանակ ազատ կը հաղորդակցի իր խաղընկերներուն հետ, կը կատարէ տրամաբանական կանխատեսումներ՝ զանոնք ներկայացնելով միտքով իրարու հետ կապուած քանի մը նախադասութիւններով:

4. Կը դիտէ պատմելու համար առաջարկուած նկարը, կրնայ տրամաբանօրէն իրարու կապուած ամբողջական նախադասութիւններով պատմել նկարին բովանդակութիւնը: Խորագիրեր կու տայ նկարին:

5. Կը վերարտադրէ ունկնդրած պատմուածքը, հեքիաթը, կը յիշէ գործող անձերուն անունները, կրնայ յիշել նախկին ծանօթ եւ նոր լսած ստեղծագործութիւններու մէջ ներգրաւող դէպքերը, երեւոյթները, կերպարները, կը գտնէ ատոնց նմանութիւնները եւ տարբերութիւնները:

6. Խօսած եւ պատմած ատեն կը գործածէ իր միտքը, ճշգրիտ, յստակ ներկայացնող ընդհանրացնող բառեր՝ անձականներ, բայեր, մակբայեր, հարցեր կու տայ անծանօթ բառերուն իմաստները հասկնալու համար:

7. Յարաբերութիւնները, զգացումները, յոյզերը կրնայ արտայայտել համարժէք բառերով:

8. Կը փորձէ գուշակել դաստիարակին, մեծերուն խօսքին մէջ գործածուած անծանօթ բառերուն իմաստները:

9. Զինք հետաքրքրող տեղեկութիւններ ստանալու հա-

մար կու տայ ե՞րբ, ինչպե՞ս, ինչո՞ւ հարցերը եւ կը փորձէ նաեւ ինքնուրոյն գտնել ասոնց պատասխանները, մէկ նախադասութեան մէջ մէկտեղելով մէկէ աւելի միտք:

1.2 ԽՕՍՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՈՒԱԾՔԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Քերականական բնոյթի տարբեր խաղերու եւ վարժութիւններու միջոցով կրկնել եւ ամրապնդել նախորդ տարիներուն երեխաներու ձեռք ձգած գիտելիքները եւ կարողութիւնները:

- Հղկել եւ ձեւաւորել երեխաներու խօսքի ձեւաբանական եւ շարահիւսական կողմերը: Դաստիարակել ճիշդ խօսելու, տարեկիցներու խօսքային սխալները նկատելու եւ շտկելու ձգտում եւ կարողութիւն:

- Երեխաներու խօսքը աստիճանաբար հարստացնել համեմատաբար բարդ շարահիւսական կառոյցներով (պարզ ընդարձակ/բարդ, բարդ ստորադասական նախադասութիւններով). *Ասիկա ծաղիկ է: Ասիկա իմ աճեցուցած ծաղիկս է: Այս հոտաւէտ ծաղիկը ես աճեցուցած եմ: Այս հոտաւէտ ծաղիկը ես աճեցուցած եմ, որպէսզի նուիրեմ ուսուցիչիս:*

- Գործնականօրէն (խօսքի նմոյշ տալով եւ քննարկելով) երեխաներուն ծանօթացնել քերականական քանի մը իրողութիւններու (օրինակ՝ *մայր-մօր, եղբայր-եղբօր, օր-օրուան, տուն-տան մէջ, ձուկ-ձուկին, ծաղիկ-ծաղկով*):

- Սորվեցնել տրուած արմատով նոր բառեր կազմել, զանոնք գործածել բառակապակցութիւններու մէջ (*ծաղիկ-ծաղկաման-ծաղկանոց-ծաղկել. թուղթ-թղթապանակ-թուղթէ, եւայլն*):

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

4. Երեխան կը կառուցէ ընդարձակ նախադասութիւններ՝ ձիշոյ կապ ստեղծելով նախադասութեան անդամներուն միջեւ (համաձայնեցնելով ենթական եւ ստորոգիչը դէմքով եւ թիով, կը կառուցէ ձիշոյ բառակապակցութիւններ, զանոնք կը գործածէ նախադասութեան մէջ համարժէք իմաստներով):

5. Նախադասութեան մէջ բառերը կը փոփոխէ ձիշոյ (կը հոլովէ, կը խոնարհէ, անհրաժեշտութեան պարագային տրուած արմատներով կը կազմէ նոր բառեր եւ ձիշոյ կը գործածէ զանոնք):

1.3. ԽՕՍՔԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՒ (պատմութիւն / նախադասութիւն / բառ / վանկ / հնչիւն) ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԻ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱԿՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Կատարելագործել եւ ամրակայել տակաւին «Կոկոն» խումբին մէջ նախադասութիւնը ծափերով բառերու, բառերը՝ վանկերու, վանկերը՝ հնչիւններու բաժնելու երեխաներու ունակութիւնները: Օգնել երեխաներուն ուշադրութիւն դարձնել (նկատել եւ ըմբռնել) խօսքի՝ պատմութեան առանձին-առանձին մասերուն: Գործնականօրէն զգալ, որ մեր խօսքը կազմուած է նախադասութիւններէն, նախադասութիւնը՝ բառերէն, բառը՝ վանկերէն, իսկ վանկը՝ հնչիւններէն:

- Խաղային վարժութիւններու եւ *տիտագրիզ* խաղերու միջոցով կատարելութեան հասցնել դաստիարակի արտասանած բառերը, առաջարկուած առարկաներու եւ անոնց նկարներուն մէջ որոշել միավանկ, երկվանկ եւ եռավանկ անուանումներ ունեցողները: Սորվեցնել տըր-

լած առարկաները եւ անոնց նկարները, խմբաւորել ըստ վանկերու քանակի: Բառերը վանկերու բաժնելու կարողութեան ձեւաւորումի գործընթացին մէջ օգտագործել ծափիկները (հւրաքանչիւր վանկին արտասանութեան զուգահեռ ծափ մը զարնելով):

1.4. ՀՆՉԻԻՆԱՅԻՆ ԼՍՈՂՈՒԹԵԱՆ, ՀՆՉԻԻՆՆԵՐԸ ՃԻՇԴ ԱՐՏԱՍԱՆԵԼՈՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Բառի հնչիւնային վերլուծութեան, շուտասելուկներու, հնչիւնային խաղերու ճանապարհով երեխաներուն սորվեցնել լսողութեամբ տարբերել եւ արեւմտահայերէն լեզուին յատուկ արտայայտչականութեամբ՝ հնչերանգով արտասանելու կարողութիւնը՝ տարեվերջին զայն գրեթէ հասցնելով հմտութեան:

- Զարգացնել երեխայի շնչառութիւնը, ձեւաւորել հնչիւններուն արտաբերումի ժամանակ բերանը ճիշդ բանալու, լեզուին, քիմքին, ակոսներուն եւ կոկորդին մասնակցութիւնը ապահովելու կարողութիւնները: Աշխատանք տանիլ հնչարտասանական թերութիւններ յայտնաբերելուն, զանոնք հնարաւորինս վերացնելու (շտկելու) ուղղութեամբ:

- Ամրապնդել եւ զարգացնել արտասանական եւ ձայնային կառոյցները, սորվեցնել յստակ եւ ճիշդ արտասանել բառերը (արտաբերել մինչեւ վերջին հնչիւնը), ձեւաւորել ձայնի ուժը եւ բարձրութիւնը անհրաժեշտութեան պարագային (կապուած խօսքի բովանդակութենէն) փոխելու ունակութիւնը:

- Երեխաներուն սորվեցնել նախ երկու հնչիւն, ապա՝ 3, այնուհետեւ 4 եւ աւելի հնչիւններ ունեցող բառերուն հրնչիւնները առանձին-առանձին լսելու, հնչիւնին դիրքը բա-

ոին մէջ որոշելու կարողութիւն (նախ՝ բառին առաջին, ապա՝ վերջին, այնուհետեւ՝ բառամէջի):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ


Տառի ուսուցումի, կարդալու նախնական կարողութեան ձեւաւորումի եւ զարգացումի գործընթացին արդիւնաւէտութիւնը կը պայմանաւորուի մինչեւ տառի ուսուցումը սկսիլը երեխաներու հնչիւնային լսողութեան զարգացումով: Բուն գրաձանաչութեան շրջանին պիտի շարունակին հնչիւնային լսողութեան զարգացումի ուղղութեամբ իրականացող աշխատանքները: Այս կարողութիւնները հնարաւոր չէ զարգացնել մէկ կամ քանի մը դասապահերու ընթացքին: Նշուած աշխատանքները «Ծաղիկ» խումբին մէջ կը պահանջեն ամէնօրեայ եւ երկարատեւ կրկնութիւններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան ուշադրութեամբ կը լսէ դաստիարակին կամ մեծին պատմութիւնը, յստակօրէն կը նշէ նախադասութիւններուն սահմանները: Կրնայ նշել նախադասութիւններու յաջորդականութիւնը:

2. Դաստիարակին յանձնարարութեամբ տրուած առարկաներու կամ անոնց պատկերներու (խաղալիքներու) անունները ծափերու օգնութեամբ կրնայ բաժնել վանկերու, հաշուել անոնց քանակը, նշել վանկերուն յաջորդականութիւնը, դասել ըստ անոնց քանակի:


3. Գործնականօրէն կը տարբերէ **նախադասութիւնը**,



բառը, վանկը, կը մտապահէ եւ անհրաժեշտութեան պարագային զանոնք կը գործածէ խօսքային կառոյցներուն մէջ:

4. Կրնայ յստակ արտաբերել հայերէնի բոլոր հնչիւնները, բառերը կ'արտասանէ մաքուր եւ մինչեւ վերջ արտաբերելով բոլոր հնչիւնները, կը պահպանէ ձայնի ուժը եւ բարձրութիւնը:

5. Կրնայ խօսքին մէջ պահպանել բառին արտասանութեան երանգները, անհրաժեշտութեան պարագային զգալ բառին արժէքը տուեալ արտայայտութեան մէջ եւ զայն ներկայացնել ձայնային արտայայտչամիջոցներով:



2. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՇՐՋԱԿԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԵՏ. ԸՆԿԵՐԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

2.1. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

- Շարունակել երեխաներուն ծանօթացնել կենդանի եւ անկենդան բնութեան հետ. ծանօթութիւն շրջապատի բոյսերուն՝ ծառերուն, ծաղիկներուն, կենդանիներուն հետ:

- Տեղեկութիւններ հաղորդել բոյսերուն աճի վրայ արտաքին միջավայրի ազդեցութենէն (*լոյս, ջուր, ջերմութիւն, խոնաւութիւն, հողի սնուցում*) ընդհանուր կախուածութեան մասին:

- Շարունակել աշխատանքը պտուղի, բանջարեղէնի, ընտանի եւ վայրի կենդանիներու, թռչուններու (*չուռի եւ ձմեռող*) մասին երեխաներու ունեցած տեղեկութիւններու եւ գիտելիքներուն մասին:

- Ձեւաւորել մարդու կեանքին մէջ օդի, ջրի եւ լոյսի կարեւորութեան, ջրի խնայողութեան, օդի մաքրութեան պահպանումին մասին համոզմունքներ:

- Հարստացնել երեխաներուն տեղեկութիւնները բնութեան պահպանութեան, բնութեան մէջ վարքի կանոններուն մասին:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կը ճանչնայ պտղատու ծառերը եւ զարդածառերը (տեքորաթիւ ծառեր ըստ արտաքին տեսքի), կը թուէ 5-6 պտղատու ծառեր, կը տարբերէ թուփը ծառէն, բանջարանոցային բոյսերը կը տարբերէ պտուղներէն:

2. Գիտէ ընտանի կենդանիներ, անոնց տուած օգուտը, անոնց հանդէպ խնամքը եւ որոշ կենդանիներու հետ վարուելու մաքրասիրական կանոնները (*շուն, կատու*):

3. Կը ճանչնայ վայրի կենդանիներէն (5-7 կենդանի), մատչելի տեղեկութիւններ գիտէ անոնց կեանքին մասին:

4. Կը կարելորէ օդը, ջուրը, լոյսը մարդուն, կենդանիներուն եւ բոյսերուն կեանքին մէջ: Ունի բնութեան (կենդանի եւ անկենդան) պահպանութեան մասին մատչելի գիտելիքներ, կարողութիւններ, գիտէ իր դերը այդ հարցին մէջ:

2.2 ԵՐԵՒԱՆ ԵՒ ԶԱՅՆ ԵՐՁԱՊԱՏՈՂ ԱՆԽԱՐՀԸ

- Հարստացնել եւ խորացնել երեխաներուն գիտելիքները (տեղեկութիւնները) Հայաստանի Հանրապետութեան, անոր դրօշին, զինանշանին, մայրաքաղաք Երեւանին, Հայաստանի պատմութեան (մատչելի տեղեկութիւններ), հայրենիքի կարելոր քաղաքներուն, գետերուն, լիճերուն, սարերուն, երկիրին հարստութեան մասին

- Ծանօթութիւն հայկական տօներուն, ազգային սովորութիւններուն, գաղափար՝ անոնց պահպանումին եւ փոխանցումին մասին:

- Երեխաներուն մէջ դաստիարակել հպարտութիւն, սէր հայրենիքին, հայոց ազգին, անոր պատմութեան եւ արժէքներուն հանդէպ:

• Դրական վերաբերմունք ձեւաւորել աշխատանքին եւ աշխատատեղի մարդուն ու անոր գործունէութեան հանդէպ:

• Ծանօթացնել երեխային անմիջական միջավայրի մասնազիտութիւններուն հետ եւ անոնց առանձնայատկութիւններուն, հնարաւորինս նաեւ որոշակի մասնագէտներու հետ (*ուսուցիչ, դաստիարակ, դայեակ, բժշկուհի, բուժքոյր, դռնապան, վարորդ, մաքրող մայրիկ* եւ այլն):

• Գաղափար տալ եւ տարրական պատկերացումներ ձեւաւորել բնակչութիւնը սպասարկող ծառայութիւններուն մասին, ինչպէս՝ *նամակատուն, դեղարան, գրադարան, գրատուն, թանգարան, դպրոց, սրճարան, խանութ* (իր բոլոր տեսակներով), *ոստիկանութիւն, հիւանդանոց, բուժարան, տարրալուծարան, եւ* անոնց ծառայութիւններուն մասին:

• Երեխաներուն սորվեցնել կողմնորոշուիլ մանկապարտէզին եւ անոր տարածքին մէջ, ճանչնալ տունէն մանկապարտէզ տանող ճամբուն վրայ հանդիպող տուները, հաստատութիւնները, խանութները, պուրակները կամ ծառուղիները:

• Սորվեցնել օգտուիլ օրացոյցէն, ժամացոյցէն, հեռաձայնէն (ինչ ցոյց կու տայ օրացոյցին կարմիր գոյնը, շաբաթը քանի օր ունի, անոնք ինչպէս արտացոլուած են օրացոյցին վրայ. ինչ ցոյց կու տան ժամացոյցին մեծ եւ փոքր սլաքները, որն է կէսօրը, կէսգիշերը եւ այլն):

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

4. Երեխան որոշակի գիտելիքներ ունի Հայաստանի մայրաքաղաքին, օրհներգին, դրօշին, զինանշանին, ազգային տօներուն եւ աւանդութիւններուն մասին:

5. Երեխան որոշակի գիտելիքներ ունի իր բնակած երկրի մայրաքաղաքին, օրհներգին, դրօշին, զինանշանին,

ազգային տօներուն եւ ամանդութիւններուն մասին:

6. Որոշ գիտելիքներ ունի շրջակայ միջավայրին բոյսերուն ու կենդանիներուն խնամքին, պաշտպանութեան, անոնց հետ վարուելու կանոններուն մասին: Կը տարբերակէ վայրի եւ ընտանի կենդանիները:

7. Գիտէ կենդանիներուն եւ բոյսերուն բնակութեան միջավայրին մասին՝ ջրային, օդային կամ հողային:

8. Կը ճանչնայ բնութեան երեւոյթները՝ ամպրոպը, անձրեւը եւ այլն, ինչպէս նաեւ անոնց դերը բնութեան մէջ:

9. Երեխան տեղեկացուած է իր բնակավայրին մասին, գիտէ իր տան հասցէն, հեռաձայնի թիւը, ծնողներուն եւ իր անունը, մականունը:

10. Կը տարբերակէ ազգականական կապերը եւ յարաբերութիւնները եւ անոնց անուանումները (*հօրաքոյր, մօրաքոյր, զարմիկ, զարմուհի, քեռի, քեռկին*, եւ այլն):

11. Կրնայ ազատ կողմնորոշուիլ մանկապարտէզին եւ անոր տարածքին մէջ, գիտէ թէ ինչով կը զբաղին մանկապարտէզին մէջ աշխատողները, ինչպէս նաեւ որոշ մասնագիտութիւններու տէր այլ մարդիկ:

2.3 ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

- Օգնել երեխային ճանչնալու իր անձը, որոշելու իր դերը ընտանիքի մէջ, ըմբռնելու իր իրաւունքները եւ պարտականութիւնները, նպաստել անոնց կատարումին՝ ճանաչողութեան ոլորտները աստիճանաբար ընդլայնել՝ երեխային տանելով դէպի ընկերային այլ համակարգեր՝ մանկապարտէզ, դպրոց, թաղամաս, համայնք, քաղաք եւ վերջապէս՝ աշխարհ:

- Զարգացնել ինչպէս ծանօթ, այնպէս ալ անծանօթ տա-

րեկիցին (տարեկիցներուն) հետ խաղալու, աշխատելու ունակութիւնները, անոր (անոնց) զգացմունքները, մտահոգութիւնները, անհանգստութիւնները հասկնալու, օգնութեան ձեռք մեկնելու, ապրումակցելու, ծագած խնդիրները համատեղ լուծելու ձգտում եւ ունակութիւն:

- Իրադրային խաղերու, քննարկումներու միջոցով օգնել երեխաներուն հասկնալու ինչ է ընկերութիւնը, ինչ կը նշանակէ ընկերութիւն ընել, ինչպէս պէտք է ընկերութիւն ընել, ինչու է պէտք ընկեր ունենալ եւ այլըն:

- Կազմակերպել ազգային տօներ, հանդէսներ, երեխաներուն ծանօթացնել անոնց իմաստին եւ ազգային արժէքին, ձեւաւորել սէր, հետաքրքրութիւն եւ յարգանք ազգային արժէքներուն նկատմամբ:


- Ձեւաւորել ինչպէս տարեկիցներու, հարազատ մարդոց, այնպէս ալ անծանօթ մարդոց միջավայրին մէջ (ինչպէս տարեկից, այնպէս ալ՝ աւագ) համակեցութեան կանոններու պահպանումի (փոխ-օգնութիւն, փոխզիջում, ապրումակցում) անհրաժեշտութեան գիտակցութեան եւ դրսեւորումի ունակութիւններ:

- Խթանել ընկեր ընտրելու, ընկերութիւն ընելու, ընկերներուն հետ բանակցելու, փոխզիջումի, անհրաժեշտութեան պարագային մեծահասակներուն դիմելու երեխաներուն փորձերը:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան գիտէ իր իրաւունքները ու պարտականութիւնները, ան կը գիտակցի, որ պատասխանատու է իր եւ իր ընկերներուն արարքներուն համար եւ գիտէ, թէ ինչ արձագանգ կը գտնէ իր (կամ տարեկիցներուն) վարքը:

2. Կ'օգնէ իր ընկերներուն, կ'ընդունի ուրիշներուն օգնութիւնը, իր յարաբերութիւններուն մէջ կը պահպանէ որոշակի



կանոններ, կը գտնէ տարբեր իրավիճակներու մէջ առաջացող խնդիրներուն լուծումի խաղաղ, բարեկիրթ ուղիներ:

3. Անհաժեշտութեան պարագային կրնայ բանակցիլ՝ վէճեր լուծել, փոխզիջումի երթալ մեծահասակի օգնութեամբ:

4. Կրնայ միանալ անձանօթ երեխաներու խաղին՝ դըրսեւորելով բարեկիրթ վարքագիծ:

5. Ինչպէս մանկապարտէզին մէջ, այնպէս ալ հարազատներու շրջանին ունի ընկերներ, կը ստեղծէ ընկերային-համագործակցային յարաբերութիւններ:

3.ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՅՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

3.1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՒԱԿՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Ձեւաւորել գեղագիտական արժէքներուն հանդէպ ուշադրութիւն եւ զանոնք ձեռք բերելու ձգտում (երգ, երաժշտութիւն, նկարչութիւն, ձեռագործ, բեմադրութիւն, եւայլն):

- Ձեւաւորել սեփական արժէքներ՝ իր դրական որակները ծանչնալու, զանոնք գնահատելու եւ սեփական ձեռքբերումներով առանց մեծամտութեան հպարտանալու կարողութիւններ եւ բարձր ինքնագնահատական:

- Զարգացնել տարեկիցները (մանկապարտէզի խումբին երեխաները), ընտանիքին անդամները, մանկապարտէզի աշխատակիցները գնահատելու, արժեւորելու, անոնց նկատմամբ հոգատար, յարգալից եւ ուշադիր վերաբերմունք դրսեւորելու կարողութիւններ:

- Ձեւաւորել մանկապարտէզին, ընտանիքին եւ միջավայրին մէջ ընդունուած կարգ ու կանոնը հասկնալու եւ անոնց գիտակցելով ենթարկուելու կարողութիւն (ինչու պէտք է այդպէս սորվի): Զարգացնել իր, մանկապարտէզի, տան, հասարակական վայրերու իրերը պահպանելու, անոնց անվտանգութիւնը ապահովելու ունակութիւններ:

- Ստեղծել երեխաներու նախաձեռնողականութիւնը, ազատութիւնները ապահովող միջավայր, ուր երեխան չի վախնար սխալիլ, ուր չկան միանշանակ «ձիշդ» եւ «սխալ» պատասխաններ, լուծումներ:

- Խթանել երեխաներու՝ խաղալու, առաջադրանքը կատարելու, միտքերը արտայայտելու, գործունէութեան եւ

հայեացքներու տարբերակներու ազատ ընտրութիւնը:

3.2. ՅՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

- Ձեւաւորել իր համար անբարենպաստ իրավիճակի մէջ (վէճ ընկերներուն հետ, իյնալու, հարուածելու, սիրելի իրը կորսնցնելու կամ կոտորելու, մտերիմ մարդոց հետ կատարուող տհաճ դէպքերու եւ այլն) զգացմունքները կառավարելու, այդ մասին դաստիարակին, բուժքրոջը կամ մէկ այլ պատասխանատուի հաղորդելու կարողութիւններ:

- Ընդլայնել եւ խորացնել երեխաներուն յոյզերու ներկայակն եւ զանոնք արտայայտչական շարժումների միջոցով շրջապատին ներկայացնելու կարողութիւնը (բառային եւ ոչ բառային հաղորդակցութեան ձեւերով)՝ անիկա հասցնելով գրեթէ հմտութեան:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հիմք ընդունելով երեխաներուն յուզական ոլորտին արտաքին դրսեւորումներուն մեծ մասը, կարելի է պատկերացում կազմել այդ պահուն անոնց յուզական աշխարհին մասին եւ դրսեւորել համարժէք վերաբերմունք:

- Նկատի ունենալ, որ յոյզերը կրնան ըլլալ **մտաւոր** (հետաքրքրասիրութիւն, զարմանք), **ընկերային** (սէր, ատելութիւն, կարեկցանք, ապրումակցում, անտարբերութիւն, թշնամանք), **գեղագիտական** (գեղեցիկի, հիւմըրի՝ զուարթախոհութեան, հիացմունքի զգացումներ եւ համարժէք արձագանգ), **բարոյական** (պարտքի, մեղքի, պա-

տասխանատուութեան զգացումներ՝ անհանգստութեան դրսեւորումներ), ուշադիր ըլլալ երեխայի յոյզերուն նկատմամբ:

- Գործնական ճանապարհով երեխաներուն սորվեցնել մարդոց դէմքի արտայայտութիւններէն, ձեռքերուն եւ մարմինին շարժումներէն (օրինակ՝ ուներուն) անոնց յուզական եւ հիմնական վիճակները հասկնալու, համարժէք գործողութիւններ ձեռնարկելու, այլոց յոյզերուն ապրումակցելու, օգնութիւն ցուցաբերելու տարրական ունակութիւններ:

- Մանկական ներկայացումներու, ասմունքի, երկխօսութիւններու, պատմուածքներու, հեքիաթներու, բանաստեղծութիւններու վերարտադրումի ճանապարհով մշակել եւ զարգացնել մարդոց զգացմունքները ըմբռնելու եւ խօսքային եւ շարժումների միջոցով զանոնք ներկայացնելու կարողութիւններ:

- Սորվեցնել *սէր, յարգանք, գնահատանք, դժգոհութիւն, մեծարում* եւ այլ զգացմունքներ արտայայտող բառեր եւ արտայայտութիւններու համակարգ: Ձեւաւորել զանոնք վերաբերմունքով եւ խօսքային ձեւերով դրսեւորելու կարողութիւն (*ես քեզի շատ կը սիրեմ, դուն (Դուք) շատ գեղեցիկ ես (էք), ինչ բարի ես դուն (Դուք), ինչ գեղեցիկ է քու հագուստդ, ես տխրեցայ, ես քեզմէ նեղուեցայ, որքան համով է, մայրիկ եւ այլն*):

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան գիտէ իր անձի մասին անհրաժեշտ տեղեկութիւններ (անունը, մականունը, տարիքը, ծնողներու անունները, մականունը աշխատանքի վայրը, տունի հասցէն), ազգակից հարազատներու, մանկապարտէզի աշխատողներուն անունները, կը գնահատէ անոնց յարա-

բերութիւնները եւ կը դրսեւոյն համարժէք վերաբերմունք:

2. Կրնայ ինքնուրոյն զբաղիլ իր սիրած գործով (նկարչութիւն, ձեռային աշխատանք, եայլն), ունի գեղագիտական գործունէութիւն դրսեւորելու որոշակի հակումներ (երգ, պար, ասմունք, թատերախաղեր, որեւէ երաժշտական գործիք (խաղալիք) նուագելու փորձեր):

3. Հանդէս կը բերէ նախաձեռնողականութիւն, *աքթիւորէն* կը մասնակցի խումբին աշխատանքներուն, տան մէջ՝ կենցաղային, ընտանեկան կեանքին:

4. Կը դրսեւորէ իրեն համար անբարենպաստ իրավիճակներու մէջ զգացմունքները կառավարելու, այդ մասին դաստիարակին կամ մեծերուն հաղորդելու կարողութիւն: Կրնայ սեփական յոյզերը եւ զգացմունքները արտայայտել բառային եւ ոչ բառային հաղորդակցութեան ձեւերով:

5. Մարդոց դէմքերուն արտայայտութիւններէն կրնայ ըմբռնել, ձանչնալ անոնց հիմնական յոյզերը եւ կը դրսեւորէ համարժէք վերաբերմունք:

6. Կը հոգայ մանկապարտէզին, տան, հարազատներուն եւ մտերիմներուն պատկանող իրերու մասին, կը դրսեւորէ խնայողական վերաբերմունք, գիտէ, կը գնահատէ եւ կը հպարտանայ սեփական ձեռքբերումներով:

7. Գիտէ եւ անհրաժեշտութեան պարագային կրնայ համարժէք բառերով եւ արտայայտութիւններով արտայայտել իր սէրը, գնահատանքը, դժգոհութիւնը, մեծարումը եւ այլ զգացմունքները:

3.3. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ

- Նպաստել, որ երեխաները կարողանան իրենք զիրենք սպասարկել (լուացուիլ, սանրուիլ, հագուիլ), սե-

փական հոգերը ինքնություն հոգալ, մանկապարտեզին մէջ
եւ տունը որոշակի պարտականութիւններ ունենալ:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ինքնությունութիւնը երեխային գիտակցիլ
կու տայ, որ ինք մեծ մարդու պէս է՝
կարելոր պատասխանատուութիւններ
ունեցող անձ մըն է: Երբ շրջապատին մէջ
բոլորը կը հասկնան, կ'ընդունին եւ կը
ցուցաբերեն համարժէք վերաբերմունք,
այդպէս կ'օգնեն անոր որպէս ինքնություն,
անկախ, ազատ մարդ մեծնալուն: *Աստնք
երեխային կարելոր արժէքներն են:*

- Զարգացնել եւ կատարելագործել սպասքէն ճիշդ օգ-
տըւելու, անձնական եւ սնունդի մաքրութեան կանոններուն
հետեւելու, մարդոց հետ հաղորդակցուած եւ յարաբերած
ժամանակ բարեկիրթ վարք դրսեւորելու կարողութիւններ:

- Ծանօթացնել երթեւեկութեան միջոցներէն ճիշդ օգ-
տըւելու կանոններուն, արգելակող նշաններուն, լուսակիրի
գոյներուն նշանակութեան, հակա-հրդեհային պահանջնե-
րուն:

- Սորվեցնել, թէ ինչպէս պէտք է ինքզինք պահել ար-
տակարգ վիճակներու մէջ, որ դէպքին՝ որու պէտք է դի-
մել, հեռաձայնի ինչ թիւով պէտք է հեռաձայնել հրշէջ
ծառայութեան, շտապ օգնութեան, ոստիկանութեան: Ձե-
ւաւորել մինչեւ նշուած ծառայութիւններուն գալը ան-
հրաժեշտ գործողութիւնները կատարելու տարրական
կարողութիւնները:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ ինքզինքին սպասարկել, հոգալ իր կարիքները, ինչպես մանկապարտեզին մէջ, այնպես ալ տունը: Կ'օգնէ այդ հարցին մէջ նաեւ իր ընկերներուն, փոքրերուն:

2. Կրնայ օգտուիլ սպասքէն, գիտէ ճաշի սեղանին շուրջ վարքի կանոնները, կը դրսեւորէ բարեկիրթ վարք:

3. Ծանօթ է եւ գործնականօրէն կրնայ օգտուիլ երթեւեկութեան միջոցներէն, գիտէ երթեւեկութեան կանոնները, լուսակիրին գոյները եւ անոնց իմաստը:

4. Գիտէ արտակարգ իրավիճակներու մէջ վարքի կանոնները եւ անհրաժեշտութեան պարագային օգնող հաստատութիւններուն դիմելու հեռաձայնային թիւերը: Ունի համարժէք գործողութիւններ կատարելու տարրական կարողութիւններ (մինչեւ օգնութիւն ստանալը):

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԾԱՒԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԳՏՈՒՄԻ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1 ՀԵՏԱՔՐՔՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

- Խթանել երեխայի հետաքրքրասիրությունը՝ պատասխանելով զինք յուզող բոլոր հարցումներուն, ստեղծել հետաքրքրաշարժ, զարմանք արտայայտող կամ առաջացնող մթնոլորտ, ընդլայնել երեխաներու ճանաչողական հետաքրքրություններու սահմանները:

- Խրախուսել եւ խթանել երեխայի՝ հարցեր տալու, անոնց պատասխանները նաեւ ինքնուրոյն գտնելու, դատողություններ ընելու ձգտումը եւ դրսեւորումները:

- Ուղղորդել երեխայի ձգտումը եւ ուսումնական գործունէութիւն ծաւալելու ցանկութիւնը ու նախաձեռնողականութիւնը («գրել» թուղթին վրայ, «կարդալ» իրեն ծանօթ ստեղծագործութիւն, գրեական պիտոյքներով, տետրակներով, թուղթերով զբաղիլ՝ ժողովել, դասաւորել, ժամանակ առ ժամանակ զանոնք հանել, դիտել վերադասաւորել եւ պահել):

- Զարգացնել որեւէ գործի մը մասնակցելու, սկսած գործը աւարտի հասցնելու մէջ կամք ցուցաբերելու, ելքեր, տարբերակներ որոնելու երեխայի ձգտումը եւ կարողու-

թիւները:

- Ստեղծել արհեստական իրադրութիւններ (խաղ, բեմականացում, երկխօսութիւն), դժուար իրավիճակներու մէջ ելքեր որոնելու, անհրաժեշտութեան պարագային տարեկիցներէն կամ մեծերէն օգնութիւն խնդրելու երեխաներու կարողութիւններու զարգացման, անոնց մէջ նախաձեռնողականութիւն, հնարամտութիւն, գործողութիւններու ձկունութիւն, սուր միտք զարգացնելու համար:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխայի արդիւնաւէտ ուսումնական գործունէութիւնը մեծապէս պայմանաւորուած է անոր՝ մասնակցութեան (ցանկացած պարագայի) ձգտումի եւ իրականացումի ու հետեւողականութեան (կամքի դրսեւորումի կարողութիւններուն առկայութեամբ:

ՉԱՓՈՐՈՒԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կը հետաքրքրուի իր շրջապատով եւ հոն տեղի ունեցածով, հարցեր կու տայ իրեն հետաքրքրող թեմաներուն մասին, անկեղծօրէն կը զարմանայ եւ կը հրձուի իր շուրջը կատարուածով:

2. Հետաքրքրութիւն կը ցուցաբերէ ուսումնական դասապահերուն ժամանակ, կը դրսեւորէ աշխոյժ մասնակցութիւն եւ նախաձեռնողականութիւն. ընտրութիւն կը կատարէ խաղերուն, առաջադրանքներուն, դերերուն միջեւ, կը նախաձեռնէ նոր խաղեր, յաճախ՝ կը կազմակերպէ կամ կը ղեկավարէ զանոնք:

3. Դասապահերուն, խաղերուն ժամանակ տարեկիցներուն հետ յարաբերած ժամանակ նոր միտքեր կը յայտ-

նէ, տարբերակներ կ'առաջարկէ, հնարամտութիւն կը ցուցաբերէ, սուր միտք, աշխուշ ազդեցութիւն կը դրսեւորէ խնդիրներ լուծած ժամանակ:

4. Նախապէս կը ծրագրէ խաղային կամ գործունէութեան այլ ձեւերու իրականացումի համար իր քայլերը, անոնց համաձայն աւարտին կը հասցնէ իր նախաձեռնած կամ մեծերուն յանձնարարած աշխատանքները, անհրաժեշտութեան պարագային իր օգնութիւնը կ'առաջարկէ միաներուն:

4.2 ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Տարբեր իրազննական նիւթերով, խօսքի արտայայտչականութեամբ եւ մանկավարժական այլ հնարքներով խթանել երեխայի ուշադրութեան կեդրոնացումը, ոչ կամաժին ուշադրութենէն կամաժին ուշադրութեան անցումը:

- Ձեւաւորել կամաժին ուշադրութեան տարրական մակարդակ. ուշադրութիւնը կեդրոնացնել որեւէ բանի մը վրայ (օրինակ՝ դաստիարակի բացատրութեան, որեւէ նկարի մը, պատմութեան ունկնդրումին, եւայլն):

- Ստեղծել քաջալերող մթնոլորտ. **սխալիլը, մոռնալը, շփոթիլը թոյլատրելի են եւ չեն պատժուիր կամ ծաղրուիր**: Ձեւաւորել «նոր բան մը սորված ժամանակ եւ նոր հմտութիւն ձեռք բերած ժամանակ միշտ ալ սխալներ կը պատահին» դիրքորոշումը եւ մշակել եւ զարգացնել որեւէ երեւոյթի մը, խօսքի մը, բացատրութեան, առարկայի վրայ ուշադրութիւնը կեդրոնացնելու կարողութիւն:

- Մշակել խաղէն, այլ զբաղումէ մը շեղելու եւ նոր գործողութեան (գործունէութեան) մէջ ներգրաւուելու ուշադրութիւնը առարկայէ մը միւսին շեղելու տարրական կարողութիւններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ ուսուցիչին կամ մեծերուն պահանջով 5-7 վայրկեան ուշադրութիւնը կեդրոնացնել անհրաժեշտ գործունէութեան ընթացքին: Օրինակ՝ նախ մինչեւ վերջ կը լսէ պատմուածքը, անոր բացատրութիւնը, առաջադրանքը եւ ապա՝ հարցեր կու տայ:

2. Կրնայ կատարել առաջադրանքը (նաեւ կենցաղային) ըստ տրուած օրինակի՝ պահպանելով նախապէս ծանօթ օրինաչափութիւնները:

3. Առանց դժուարութեան կրնայ կտրուիլ գործունէութեան որեւէ ձեւէ, կեդրոնանալ առաջարկուած գործողութեան վրայ, յետոյ ալ նորէն վերադառնալ անոր:

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխայի համար ստեղծել բնական եւ հաճելի թեմաներով զրոյցներու, երկխօսութիւններու մթնոլորտ՝ զայն մղելով ճմանկապարտէզին մէջ, տունը, պտոյտի ժամանակ կամ որեւէ այլ իրադարձութեան մը կամ ձեռնարկի մը ընթացքին տեղի ունեցածը պատմելու՝ պահպանելով դէպքերուն յաջորդականութիւնը, զգացմունքային, յուզական գոյները:

- Սորվեցնել տարեկիցներուն եւ մեծերուն պատմել լսած հեքիաթներու, պատմութիւններու, տպաւորութիւններու, դիտած շարժանկարներու, ձեռք ձգած այլազան տեղեկութիւններու եւ ինքզինք հետաքրքրող տարաբնոյթ երեւոյթներուն մասին:

- Զարգացնել նախապէս լսած, ունկնդրած պատմութիւնները կամ անոնցմէ դրուագներ յիշողութեամբ վերար-

տադրելու, ծանօթ կերպարներ մտաբերելու, զանոնք իրարու հետ համեմատելու (ուրիշ ո՞վ այդպէս արարք թոյլ տուաւ, ո՞ր հեքիաթին մէջ կը կրկնուին այդ դէպքերը, որո՞նք խօսքերն են ասոնք եւ այլն) երեխայի կարողութիւնները:

- Մշակել տեսածը (օրինակ՝ պտոյտի ատեն տունէն ելլելու ճանապարհին, տունէն դպրոց վերադարձի ճամբուն, ճամբորդութեան ժամանակ, եւայլն) յիշողութեամբ վերականգնելու եւ կարելորները վերարտադրելու, զրուցակիցին հնարաւորինս մանրամասն եւ տպաւորիչ պատմելու կարողութիւն:

- Տարբեր հարցերու, զուգորդումներու, երեխաներուն ծանօթ՝ հարազատ, սիրելի առարկաներու միջոցով օգնել անոնց, զարգացնելու համար իրենց յիշողութիւնը:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ ծանչնալ առաջուրնէ իր տեսած առարկաները, յիշել եւ վերարտադրել այն գործողութիւնները, զորս տեսած է, որոնց ինք մասնակցած է:

2. Ոգեւորուած եւ բծախնդրօրէն իր տարեկիցներուն եւ մեծերուն կը պատմէ իր ձեռք ձգած բազմաբնոյթ տեղեկութիւններուն, տպաւորութիւններուն մասին:

3. Անծանօթ բառերը (խօսքին մէջ կամ պատմութեան մէջ հանդիպող) մինչեւ 5 անգամ կրկնելէն յետոյ միտքը կը պահէ, կը հասկնայ անոնց իմաստը եւ յետագային զանոնք կը գործածէ խօսքին մէջ (2-3 բառ):

4. Կրնայ յիշել 3-5 ցուցադրուած առարկաներ, անոնց նկարները, երբ այդ առարկաները կամ նկարները ցուցադրելէն յետոյ կը պահուին:

4.3 ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ

• Ապահովել այնպիսի ուսումնական միջավայր մը, ուր երեխաները կրնան փորձել, սխալիլ, որոշել իրենց թոյլ տուած սխալները եւ շտկել զանոնք՝ չվախնալով անյաջողութենէն:

• Զարգացնել ունկնդրած պատմութեան, հեքիաթին, առակին համար սկիզբ («մինչ այդ ինչ եղած էր») եւ շարունակութիւն հիսելու երեխայի կարողութիւնը:

• Սորվեցնել պատմութիւններ հիսել իրենց խաղալիքներուն (տիկնիկներ, արջուկներ...), ծանօթ կենցաղային իրերուն (դագաներ, դանակներ, փոշեկուլ, լուացքի մեքենայ, եւայլն) մասին՝ օգտուելով երեակայութենէն:

• Ձեւաւորել սովորական, պարզ առարկաներու, երեւոյթներու, պատկերներուն մէջ տեսնել անսովորը, հրաշալին եւ զանոնք ներկայացնել խօսքով, գոյներով, ձեւերով...


• Խթանել չտեսածին, տեղի չունեցածին մասին երեակայութեամբ պատկերացնելու, զանոնք խօսքով, գործողութիւններով, գեղարուեստական միջոցներով ներկայացնելու երեխաներու կարողութեան զարգացումը:

• Սորվեցնել հասկնալ ծանօթ պայմանական նշանները, առարկաները ու երեւոյթները ներկայացնել դիպուկօրէն (բաւականին մօտ) պայմանական նշաններով:

• Զարգացնել մնջախաղի միջոցով մարդոց գործողութիւնները, առարկաները ներկայացնելու ունակութիւն (օրինակ՝ ներկայացնել, թէ ինչպէս մայրիկը կ'արդուկէ հագուստը, ինչպէս կը թոփ օդանաւը, թռչունը, եւայլն):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Որոշ երեխաներ չեն ցանկար պատմել, արտայայտուիլ իրենց երեակայածին մասին, ընդհանուր ստեղծագործական



աշխատանքներուն մասնակցութիւն չեն ցանկար ունենալ, որովհետեւ կը վախնան անհանգստութենէն, չհասկցուած ըլլալէն, ծաղրուիլէն: Ասոր համար անհրաժեշտ է երեխաներուն համար ստեղծել ազատ-անկաշկանդ մթնոլորտ մը, գնահատել երեխային ամէնէն չնչին առաջընթացը եւ կատարած քայլը:

- Զարգացնել տրուած նիւթերով տարբեր կիրառութեան առարկաներ (իրեր), պատկերներ (ծաղիկներ, ծառեր,...), մտածել եւ ինքնուրոյն մտայնացումները (առնուազն երկու, երեք) իրականացնել:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան կրնայ երեւակայական պատմութիւններ յօրինել իր խաղալիքներուն, կենցաղային իրերուն մասին:

2. Սովորական առարկաներու, երեւոյթներու, բնութեան պատկերներու մէջ տեսնել առաջին հայեացքէն աննկատ պատկերներ (*ինչի՞ կը նմանի այս ամպը, ծառին ճիւղը, եւայլն*) եւ անոնց մասին խօսիլ, նկարել, ծեփել:

3. Առաջարկուող նիւթերով (բրինձ, ոսպ, արեւածաղիկի սերմ, ցորենի հասկ, երկրաչափական պատկերներ, եւայլն) կը ձեւաւորէ տարբեր պատկերներ, առարկաներ:

4. Կրնայ երեւակայութեամբ պատկերացնել եւ խօսքով կամ գոյներով ներկայացնել ուսուցիչի առաջարկած պատկերները (ծովուն ալիքներուն ալեկոծումը, օդանաւին թռիչքը ամպերու մէջէն, անտառի ծառերուն ձօձուիլը, եւայլն):

5. ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ. ԿԱՐԴԱԼՈՒ ԵՒ ԳՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ

5.1 ՏԱՌԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՒ ԿԱՐԴԱԼՈՒ ՏԱՐՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

- Ծանօթացնել հայերէնի հնչիւն-տառերուն հետ (գլխա-գիր եւ պարզ գիրեր), որոնք չեն անցած «ԿՈԿՈՆ» խումբին մէջ:

- Սորվեցնել եւ ամրակայել *տառը հնչիւնի պատկերն է* հասկացութիւնը: Գործնականօրէն իւրացնել տալ *տառը կը տեսնենք, կը կարդանք եւ կը գրենք, իսկ հնչիւնը կ'արտասանենք եւ կը լսենք* գիտելիքը:

- Զարգացնել գործնական ծանապարհով հայերէն այբուբենին ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները տարբերակելու, բառին մէջ անոնց տեղը որոշելու եւ նշելու կարողութիւնները:

- Զարգացնել տարբեր հնչիւնավանկային կառոյց ունեցող բառերը (2-3 վանկանի) վերլուծելու երեխաներու ունակութիւնը՝ զայն մինչեւ տարեվերջ դարձնելով կարողութիւն:

- Զարգացնել շարժական տառերով (մեծադիր կամ անհատական) ուսուցիչին յանձնարարած բառերը (կարդալու համար նախատեսուած բնագիրէն ընտրուած) կազմելու եւ կարդալու կարողութիւնը:

- Ձեւաւորել եւ զարգացնել միավանկ (2-3 տառերով) բառերը ամբողջական, առանց հեգելու ընթերցելու երե-

խաներուն կարողութիւնը:

- Ձեւաւորել եւ մինչեւ տարեվերջ աստիճանաբար զարգացնել 2-3 բառերէ կազմուած նախադասութիւնը անհարկի դադարներէ զերծ եւ հասկնալով կարդալու երեխայի կարողութիւնը:

- Աշխատանք տանիլ կարդացած բնագիրին մէջ բառերը հասկնալու, բացատրելու, զանոնք ուսուցիչին օգնութեամբ նոր նախադասութիւններու մէջ գործածելու ունակութեան ձեւաւորումի ուղղութեամբ:

- Ձեւաւորել նախադասութեան մէջ գործածուած բառը (մեկնելով միտքէն) կոահելու երեխայի կարողութիւնը (կոահող ընթերցող):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Եթէ երեխան կը սկսի կարդացած ատեն ճիշդ կոահել յաջորդ բառը, կը նշանակէ ան սկսած է հասկնալով կարդալ: Ասիկա կարդալու նոր որակական յատկանիշն է, որ կը վկայէ երեխայի կարդալու կարողութեան զարգացման ընթացքին մասին:

- Զարգացնել կարդացած փոքրիկ բնագիրին շուրջ ուսուցիչի տուած հարցերուն պատասխանելու, բնագիրին մէջ հարցին պատասխանը ներկայացնող նախադասութիւնը, բառը, բառակապակցութիւնը գտնելու եւ ընթերցելու կարողութիւնը:

- Ձեւաւորել եւ մինչեւ տարեվերջ զարգացնել կարդացած բնագիրի բովանդակութիւնը, նախ ուսուցիչին հարցերուն միջոցով, ապա զանոնք ինքնուրոյն վերարտադրելու կարողութիւն:

- Ուսուցումի գործընթացի ժամանակ գործնականօրէն իրացնել տալ *պատմութիւն, նախադասութիւն, բառ,*

վանկ, հնչիւն եզրաբառերը: Ձեւաւորել զանոնք որոշակի խօսքային կառոյցներու մէջ ձիշդ գործածելու կարողութիւն: Օրինակ՝ նախադասութիւնը կազմուած է բառերէն, այս բառը ունի երկու վանկ եւ այլն:

- Գործնականօրէն (կարդալու, գրելու ճանապարհով) սորվեցնել, որ մարդոց անունները, մականունները եւ նախադասութեան առաջին բառը կը սկսին գլխագիրով, ինչպէս նաեւ նախադասութեան աւարտին կը դրուի վերջակէտ:

- Ձեւաւորել թեքսթին մէջ վերջակէտը, ստորակէտը, հարցման եւ բացազանչական նշանները ծանչնալու, անոնց իմաստը հասկնալու եւ ընթերցած ատեն զանոնք նկատի առնելու տարրական կարողութիւններ:

5.2 ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱԴՐՈՒՄ

- Սորվեցնել գրիչով գրել անցած բոլոր տառերը, պահպանելով հայոց տառերուն գրութեան չորս տեղադրութիւնը:

- Մշակել եւ զարգացնել տպագիր եւ ձեռագիր տառերուն տարբերութիւնները նկատելու, մտապահելու եւ տպագիր բառերը ձեռագիր ընդօրինակելու երեխաներու կարողութիւնները:

- Ձեւաւորել տրուած նմոյշէն (ձեռագիր) գրիչով ընդօրինակելու կարողութիւն: Մինչեւ տարեվերջ կատարելագործել գրատախտակէն եւ դասագիրքէն կամ տպագիր այլ բնագիրէ մը ձեռագիր, գրիչով, ընդօրինակելու երեխայի կարողութիւնը (1-2 նախադասութիւն, 4-5 բառ, երկու բառակապակցութիւն):

- Սորվեցնել ուսուցիչի թելադրութեամբ նախ հնչիւնային, ապա բառային թելադրութիւն գրելու (1-2 վանկ ունեցող) ունակութիւն՝ թելադրուող բառին շուրջ նախապէս կատարելով վերլուծական, համադրական աշխատանք:

- Մինչև տարեվերջ ձեւաորել 2-3 բառ ունեցող նախադասութիւնները ուսուցիչին թելադրութեամբ գրելու ունակութիւն (վերլուծական, համադրական աշխատանքէն յետոյ):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ընդօրինակութիւնները եւ թելադրութիւնները մեծապէս կը նպաստեն կարդալու կարողութեան ձեւաւորման: Կը նշանակէ՝ հարկաւոր է զուգորդել կարդալ-գրելու գործընթացը, եւ երեխային գրել տալ այն բառը, որ ան դժուարութեամբ կը կարդայ:

ԶԱՓՈՐՈՇԻԶԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Երեխան գիտէ հայերէն բոլոր հնչիւն-տառերը, կը տարբերակէ ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները, կրնայ ներկայացնել հնչիւններու յաջորդականութիւնը ընթերցող բառին մէջ:
2. Կրնայ վերլուծական համադրական աշխատանքէն յետոյ շարժական տառերով բառեր կազմել եւ կարդալ զանոնք:
3. Կը կարդայ փոքր, պարզ բնագիրներէ (4-5 նախադասութենէն կազմուած), պահպանելով կէտադրութեան եւ առոգանութեան նշանները:
4. Կը հասկնայ կարդացածը, կը պատասխանէ կարդացած բովանդակութեան շուրջ ուսուցիչի ուղղած հարցերուն, կը կատարէ պարզ դատողութիւններ եւ եզրայանգումներ:
5. Կը գրէ հայերէնի բոլոր տառերը, պահպանելով վայելուչ գրելու կարողութիւնները:
6. Կրնայ ընդօրինակել նախ ձեռագիրէն, մինչև տարեվերջ նաեւ տպագիր օրինակէն:

7. Վերլուծական, համադրական աշխատանքէն յետոյ կրնայ թելադրութեան միջոցով գրել միավանկ բառեր, իսկ տարեվերջին՝ նաեւ պարզ նախադասութիւններ (1-2 նախադասութիւն՝ կազմուած 2-3 բառերէ):

8. Գոց գիտէ հայոց տառանունները եւ կը ծանչնայ անոնց ստեղծողը՝ Մեսրոպ Մաշտոցը:

9. Կը կարդայ՝ առանց առանձնացնելու կը մասնիկը եւ է օժանդակ բայը:

5.3 ԳՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԱՐԴԻԻՆԱԻԷՏ ԴԱՐՁՆՈՂ ԿԱՐՈՂՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՁԵՒԱԻՈՐՈՒՄ

- Խթանել մանր շարժողական ոլորտի զարգացումը՝ մանր գործողութիւններ կատարելով. սորվեցնել մանր առարկաներով խաղալ, կառուցել, կտրել, փակցնել եւ այլն:

- Զարգացնել մատիտը, գրիչը, վրձինը, մկրատը ճիշդ բռնելու եւ գործածելու կարողութիւնները՝ տարեվերջին զանոնք հասցնելով հմտութեան:

- Կատարելութեան հասցնել փոքր պատկերները նրբագծելու, գունաւորելու երեխայի կարողութիւնը՝ դուրս չելլելով սահմաններէն: Ձեւաւորել մանր ուրուագիծեր, փոքր պատկերները միաւորելու եւ ամբողջական նկար ստանալու երեխաներու կարողութիւնները (երկրաչափական պատկերներով՝ տնակ, աշտարակ, մարդուկ, եւ այլն):

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Երեխաներու ֆիզիքական զարգացումը (անգամ ձեռքի մատներու) կը նպաստէ մտաւոր զարգացումին: Արագաշարժ, շարժուն եւ շարժումներուն մէջ ձկուն, չափին մէջ շարժուն գործունէութիւն

ծաւալող երեխան աւելի լաւ կը մտածէ,
կ'աշխատի, կը սորվի, կը խաղայ եւ կը
ստեղծագործէ:
Ուստի, տարիքային այս խումբին
երեխաները պիտի գտնուին շարժուն
գործունէութեան մէջ:

5.4 ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

- Ձեւաւորել եւ զարգացնել գրական-գեղարուեստական ճաշակ, բանաստեղծական լսողութիւն, գեղարուեստական գրականութեան որոշ ժանրերու (հեքիաթ, բանաստեղծութիւն, պատմուածք, առակ) մասին պատկերացումները:


- Սորվեցնել զգալ գրական լեզուին արտայայտչականութեան, պատմելաձեւին, բառամթերքին նրբերանգները, տրամադրութիւնը, երաժշտականութիւնը, ռիթմը:

- Խումբին սենեակէն ներս ստեղծել մանկական գրադարան, հնարաւորութիւն ստեղծել, որ երեխաները գիրքեր առնեն, թերթատեն, դիտեն նկարները, ցանկութեան պարագային՝ ընթերցեն, թէկուզ մէկ նախադասութիւն կամ մէկ բառ:

- Ժամանակ առ ժամանակ երեխաներուն համար կարդալ ոչ դասագրքային գեղարուեստական մանկական ստեղծագործութիւններ, երբեմն նաեւ երեխաներուն յանձնարարել փոքրիկ պատմութիւններ, տողեր ընթերցել:


- Զարգացնել ունկնդրած գրական ստեղծագործութիւններու բովանդակութիւնը ըմբռնելու, հերոսներուն գործողութիւններուն, տեղի ունեցող դէպքերուն յուզականօրէն արձագանգելու երեխաներու ունակութիւնները:

- Զարգացնել ունկնդրած ստեղծագործութիւններու



գործող անձերուն երկխօսութիւնները վերարտադրելու, անոնց արարքներուն, տեղի ունեցող դէպքերուն մասին դատողութիւններ ընելու, կարծիքներ յայտնելու եւ գնահատող խօսք կառուցելու երեխաներուն կարողութիւնները:

- Նպաստել նախապէս ունկնդրած պատմութիւններու մէջ ներկայացուած դէպքերուն, գործող անձերու եւ անոնց արարքները յիշելու, եւ զանոնք նոր ունկնդրած պատմութեան դէպքերուն եւ հերոսներուն հետ համեմատելու, նմանութիւններն ու տարբերութիւնները նկատելու, անոնց մասին դատողութիւններ, եզրակացութիւններ ընելու կարողութիւններու ձեւաւորմանը:



**ԾՐԱԳԻՐԻՆ
ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԵԱՆ
ԱՐԴԻՒՆԱԻԷՏ
ԻՒՐԱՑՈՒՄԻՆ ՆՊԱՍՏՈՂ
ՄԵԹՈՏՆԵՐ**

Մեթոդը հոգեբանա-մանկավարժական որոշակի սկզբունքներու վրայ խարիսխուած, անոնցմէ բխող աշխատանքային ձեւերու, հնարներու համալիր մըն է, որ կ'օգնէ ուսուցիչին հասնիլ ուսումնական ծրագիրով իր առջեւ դրուած ուսուցողական կամ դաստիարակչական նպատակներուն: Աշխատանքային մեթոդները կ'ընտրուին նկատի առնելով իրաքանչիւր խումբի տարիքային առանձնայատկութիւնները, մասնատրապէս, հոգեբանական եւ կազմաբնախօսական ինքնատիպութիւնը եւ երեխային գործունէութեան առաջատար ձեւը տուեալ տարիքին: Յիշենք, որ մարդ հիմնականին մէջ կը ծառայէ գործունէութեան երեք ձեւ՝ խաղ, ուսում, աշխատանք: Տարիքային տարբեր հատաձեւներուն նշուած գործունէութեան ձեւերէն մէկը ունի գերակայութիւն: Պարզէն ալ պարզ է, որ 3-6 տարեկան փոքրիկին գործունէութեան ձեւերուն մէջ կը գերակշռէ խաղը: Ուրեմն, մանկապարտէզին մէջ փոքրիկներուն կրթութիւնը կազմակերպած ժամանակ առաջին հերթին պէտք է առաջնորդուիլ խաղով՝ դասապահերուն ընթացքին մեծ տեղ տալով ուսուցողական (տիտագրիզ), շարժուն եւ հետաքրքրաշարժ խաղերուն:

Մանկապարտէզի տարիքային երեք խումբերուն մէջ (Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ), պէտք է կիրառել թէ բովանդակութեամբ, թէ՛ կազմակերպումի ձեւով, թէ՛ խաղին յատկացուած ժամաքանակով տարաբնոյթ խաղեր:

Խաղի տեսակին ընտրութիւնը կատարած ատեն պէտք չէ մոռնալ, որ երեխան ցանկացած գործունէութեամբ (ներառեալ՝ խաղ ընելով) չի կրնար երկար ժամանակ զբաղիլ: Խաղային գործունէութեան տեսակներն անգամ պէտք է փոփոխուին: Կան խաղեր, որոնք երեխան կը խաղայ նստած, կան շարժուն խաղեր, եւայլն: Եթէ երեխաները 5-7 վայրկեան զբաղած են, օրինակ, նստած խաղով մը, կը նշանակէ անոր պէտք է յաջորդէ շարժուն խաղ մը կամ շարժում պահանջող գործունէութիւն:

Խաղերը կ'ըլլան տարբեր տեսակի, զանազան կարգի խաղալիքներով իրականացուող: Որպէս խաղալիքներ կարելի է նկատի ունենալ յատուկ ուսումնական նպատակով ստեղծուած խաղեր, իրազննումի (տիտագիիզ) նիւթեր, ընդհանրացնող անուններու շուրջ աշխատանք տանելու համար նախատեսուած քարթեր, մանր նկարներ (պտուղ, բանջարեղէն, հագուստ, եւայլն), բառային լրթոներ, խաչբառեր, կտրտուած տառեր, բառ-նախադասութիւններ, ցուցադրական պաստառներ, եւայլն: Վերջապէս, մանկապարտէզին մէջ երեխաները կրնան խաղալ նաեւ երեւակայական խաղեր:

Երեխաները «Բողբոջ» խումբին մէջ պէտք է խաղան իրական առարկաներով եւ բնական վիճակին (իրենց կենսափորձին) հարազատ բովանդակութեամբ (դասաւորել պնակները, գաւաթները, հագցնել պուպրիկը, յարդարել պուպրիկին անկողինը, կողովին մէջ խմբաւորել պտուղը եւ բանջարեղէնը, եւայլն):

Սկսած «Կոկոն» խումբէն՝ աստիճանաբար երեխաներուն պէտք է սորվեցնել երեւակայական խաղեր խաղալ, երեւակայական խաղալիքներով խաղալ (աթոռները շարել իբրեւ գնացքի վակոններ, կամուրջ կառուցել խորանարդիկներով, առետուր ընել թուղթէ «դրամներ»ով, եւայլն):

Խաղային ցանկացած գործունէութիւն երեխային հա-

մար կը ստեղծէ յուզական մթնոլորտ մը եւ ուսումնական գործընթացին կու տայ բնական՝ իրական, հոգեհարազատ մթնոլորտ: Այդ մթնոլորտը կը նպաստէ երեխային ձեռք բերած գիտելիքներու եւ կարողութիւններու ըմբռնումի, յիշողութեան մէջ ամրակայութեւն եւ խորանալուն: Խաղի ժամանակ երեխան ազատ է, անկաշկանդ: Ան այնպէս կը տարուի խաղային իրավիճակներով, որ ուսուցանողը նիւթը կ'իւրացնէ ոչ թէ որպէս դաս, այլ որպէս խաղի կանոն, գործողութիւններ, որոնք կը ներկայացնեն խաղային վիճակներ: Ուրեմն, ամէնէն արդիւնաւէտ մեթոդը խաղն է, ամէնէն անվնասը՝ խաղալով սորվեցնելը:

Սոյն ծրագիրի «Բացատրագիր» բաժինին մէջ մենք նշած ենք, որ երեխաները ծրագիրով նախատեսուած տարաբնոյթ եւ տարամակարդակ գիտելիքները եւ կարողութիւնները պէտք է ձեռք բերեն ինքնուրոյն, իրենք պէտք է ձեռք բերեն եւ ոչ թէ անոնց պէտք է պատրաստ «մատուցուին»: Գիտելիքներու ինքնուրոյն ձեռք բերումի լաւագոյն մեթոդներու խումբը գործնական մեթոդներն են:

Այս խումբին մէջ կը դասուին տարաբնոյթ վարժութիւնները, ինքնուրոյն աշխատանքը (օրինակ՝ կարդացուելիք բառը շարժական տառերով կազմել եւ յետոյ նոր կարդալ), պարզ ուսումնասիրութիւնները, պրպտումները, եւայլն:

Չափազանց կարեւոր են այսօր համաշխարհային մանկավարժութեան մէջ արդարացիօրէն արդիական աշակերտակեդրոն, մանկակեդրոն մեթոտները, որոնց միջոցաւ կ'ապահովուի ուսումնական գործընթացին իւրաքանչիւր երեխայի մասնակցութիւնը: Անոնց մէջ առաջին հերթին փոխգործուն (ինթըրաքթի) մեթոտներն են, որոնց առաւելութիւնը ակնյայտ կը դառնայ աշխատանքի ժամանակ իսկ, երբ աշակերտները անկաշկանդ կը մասնակցին խմբային աշխատանքին, որովհետեւ իրենք կ'աշխատին իրարու հետ. չկայ նկատողութիւն ստացող, առաջատար

երեխայ, բոլորը հաւասար են եւ ազատ: Այս աշխատանքին ժամանակ անոնք կը սորվին զիրար լսել, օգնել, միմիանց սորվեցնել եւ իրարմէ սորվիլ, եւ կան ինքնաարտայայտումի, ինքնադրսետրումի ընդարձակ հնարաւորութիւններ:

Այսպիսի աշխատանքները կը կազմակերպուին փոքր խումբերով (4-5 հոգի) կամ զոյգերով (միեւնոյն նստարանին կամ իրարու քով նստած երկու երեխաները առաջադրանքները կը կատարեն միասին): Խումբերով կամ զոյգերով աշխատած ատեն, ամէնէն կարետորը այն է, որ երեխաները կը գիտակցին, որ խումբին յաջողութիւնը կը պայմանաւորուի բոլոր անդամներուն ճիշդ աշխատանքով, բոլորին մասնակցութեամբ: Խումբին աշխատանքը բարձր կը գնահատուի կամ խումբը յաղթող կը ճանչցուի ոչ միայն անոր համար, որ ճիշդ եւ ժամանակին աւարտեց աշխատանքը, այլեւ աշխատանքին մասնակցեցան խումբին բոլոր անդամները: Ասիկա կը ձեւաւորուի ընդհանուր նպատակին հասնելու համար համախմբուելու, ուժերը միաւորելու, առաւելագոյնը ունենալու, միմիանց համար պատասխանատուութիւն կրելու չափազանց կարետոր որակներ:

Անշուշտ, խմբային մեթոդները դաստիարակէն կը պահանջեն ջանքեր, լարուածութիւն, սակայն երեխայի համար անիկա գործունէութեան հրաշալի հնարաւորութիւն է:

Առաջին հայեացքէն կրնայ թուիլ, որ փոքրիկներու, մասնաւորապէս «Բողբոջ» խումբի երեխաներուն համար խմբային աշխատանքը այնքան ալ դիւրին չէ: Ընդհակառակը, փոքրիկներուն պէտք է այդ տեսակի գործունէութիւնը, քանի որ 3-4 (յաճախ՝ աւելի մեծ) տարեկան փոքրիկները կը դժուարանան կամ գրեթէ չեն կրնար առանձին խաղալ: Խումբով անոնք իրարու հետ կ'աշխատին առաւել անվախ, կը վստահին ոչ միայն իրենց

ընկերներուն, այլե՛ իրենք իրենց: Այս հանգամանքը անոնց աշխատանքը կը դարձնէ առաւել արդիւնաւէտ:

Խօսքային մեթոդները մանկապարտէզին մէջ չափազանց կարեւոր են եւ առաւել գործածական: Չմոռնանք, որ նախադպրոցական տարիքին երեխային բառամթերքն ու խօսքը առաւելապէս կը զարգանան շրջապատին լսելու հիման վրայ: Այս պարագային փոքրիկին համար էական է ոչ միայն դաստիարակին խօսքը, այլեւ յատուկ նպատակով հիսած պատմութիւնները:

Ուսուցիչին փոքրիկ պատմութիւնները պէտք է ըլլան հակիրճ, իրաքանչիւր բառ պէտք է հնչէ մաքուր, յստակ, իսկ նախադասութիւնները արտաբերած ատեն պէտք է պահպանել ոչ միայն արտայայտչականութեան կանոնները, այլեւ օգտագործել դիմախաղեր եւ ժեստեր: Զրոյցի բովանդակութիւնը երեխաները առաւել լաւ կը հասկնան, եւ անոնց ուշադրութիւնը կը կեդրոնանայ նիւթին վրայ, երբ ուսուցիչը պատմած ատեն կը գործածէ ցուցադրական նիւթեր, նիւթին առընչակից նկարներ, խաղալիքներ: Այս պարագային գործածութեան մէջ կը ներգրաւուին ոչ միայն ականջները, այլեւ աչքերը, եւ ըմբռնումի ու մտապահումի գործակիցը կը կրկնապատկուի: **Որքան շատ զգայարաններ մասնակցին որեւէ, աշխատանքի ատեն, այնքան առաւել զօրաւոր կ'ըլլայ մտապահումը:**

Խօսքային արդիւնաւէտ մեթոդ է նաեւ հարցազրոյցը, որ մանկապարտէզին մէջ գործածուող ամէնէն գործունը եւ արդիւնաւէտն է: Փոքրիկներուն հետ հարցազրոյց վարելու գործընթացը ունի բաւականին մեթոտական նրբութիւններ, որոնք անպայման պէտք է նկատի առնուին: Կարելորելով նշենք, որ ինչպէս գործունէութեան բոլոր ձեւերուն մէջ, այնպէս ալ հարցազրոյցի ժամանակ փոքրիկներուն մասնակցութեան հնարաւորութիւնը անսահմանափակ չէ. երեխաներ ասկէ ալ շուտ կը յոգնին:

Ներկայացնենք քանի մը երաշխաւորութիւն արդիւնաւէտ հարցազրոյց իրականացնելու գործընթացին վերաբերեալ.

1. Հարցազրոյց վարելու համար դաստիարակը **պէտք է նախապէս պատրաստէ հարցեր**՝ յաճախ նախատեսելով, ձեակերպելով քանի մը տարբերակ. կրնայ ըլլալ փոքրիկներ չհասկնան՝ չըմբռնեն հարցը, հետեւաբար անիկա պէտք է այլ կերպ ներկայացուի:

2. **Ուսուցչուհին ինք լիարժէքօրէն պէտք է իմանայ իր հարցերուն պատասխանները** եւ մօտաւորապէս կանխատեսէ երեխաներէն ակնկալուող պատասխաններ եւ պատրաստ ըլլայ անոնց ուղղութիւն տալու:

3. Նախադպրոցական տարիքի երեխաներուն տրուող հարցերը պէտք է ձեակերպուին այնպէս, որ չակնկալուին այդ կամ ոչ պատասխաններ կամ ունենան մէկ պատասխան: **Հարցերը պէտք է ըլլան բազմապատասխան**, որպէսզի հնարաւորութիւն ընձեռեն իւրաքանչիւր երեխայի մտածել եւ իր միտքը արտայայտել այնպէս, ինչպէս կը մտածէ:

4. **Չկայ ճիշդ եւ սխալ պատասխան**. պատասխանը երեխայի տեսակէտն է, եւ այն պէտք է ընդունուի՝ առանց քննադատութեան, առաւել եւս՝ առանց ժխտումի («ճիշդ չես»):

5. Իւրաքանչիւր նախադասութիւն պէտք է պարունակէ հարցում մը: **Կարելի չէ մէկ անգամէն տալ մէկէ աւելի հարցեր**:

6. Հարցերը պէտք է տրուին տրամաբանական յաջորդականութեամբ. **մէկ հարցը պէտք է նախապատրաստէ միւսը** եւ նպաստէ, օգնէ երեխային՝ պատասխանելու տուեալ հարցին:

7. Հարցում արտայայտող նախադասութիւնները պէտք է ըլլան ոչ **ընդարձակ եւ պէտք չէ պարունակեն երեխային համար անծանօթ բառեր**:

8. Երեխաներու պատասխան **խօսքը կարելի չէ ընդհատել**՝ անոր թոյլ տուած խօսքային սխալները ուղղելու համար: Անհրաժեշտ է համբերատար լսել երեխային, խրախուսել անոր միտքերը, ապա զգուշօրէն բացատրել սխալը թէ՛ իրեն, թէ՛ դասարանին:

Հարցազրոյցին հարցերը ուսուցիչը պէտք է գրառէ իր օրուան աշխատանքային ծրագիրին մէջ:

Մանկապարտէզին մէջ յաճախ կը գործածեն նաեւ **զրոյցներ** (նաեւ՝ դաստիարակչական նպատակներով):

Եթէ հարցազրոյցը կ'իրականացուի երեխաներու եւ ուսուցիչին միջեւ, ապա զրոյցը կ'իրականացնէ ուսուցիչը՝ առանձինը, իսկ երեխաները կը լսեն զինք եւ յաճախ նաեւ կ'արձագանգեն տեղէն: Ասիկա արդէն կ'ըսէ, որ զրոյցը պէտք է կարճ տեւէ:

1. Զրոյցը պէտք է կարճ տեւէ, որովհետեւ **երկար տեւող զրոյցը երեխաները չեն լսեր**. 3-5 վայրկեան յետոյ անոնց ուշադրութիւնը կը շեղի:

2. Զրոյցը պէտք է ըլլայ **մէկ նիւթի, մէկ խնդրի շուրջ եւ չափազանց յստակ նպատակով**:

3. Զրոյցը պէտք է զուգորդուի համապատասխան նկարներով, խաղալիքներով, առարկաներով, իսկ ուսուցիչին խօսքը՝ դիմախաղերով եւ ժեսթերով:

4. Զրոյցը պէտք է **պարունակէ անծանօթ բառեր** եւ երկարաշունչ նախադասութիւններ:

5. Զրոյցի բովանդակութիւնը (նիւթը) ուսուցիչը պէտք է պատրաստէ գրաւոր՝ գրառէ իր օրուան ծրագիրին տետրակին մէջ:

6. Զրոյցի ժամանակ անպայման պէտք է **արձագանգել երեխաներու հնչեցուցած կարծիքներուն** եւ անընդհատ կապ պահել երեխաներուն հետ:

Բովանդակություն

- 5 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
- 9 ԲԱՑԱՏՐԱԳԻՐ
- 17 Ա.«ԲՈՂԲՈՋ» ԽՈՒՄԲ
1. ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍՏԱՅՈՒՄ ԵՒ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ
 2. ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ
 3. ԱՆՁԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՒ ՅՈՒՋԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ
 4. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ
- 37 Բ.«ԿՈԿՈՆ» ԽՈՒՄԲ
1. ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ
 2. ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ
 3. ԱՆՁԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՒ ՅՈՒՋԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ
 4. ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆ
 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ, ՎԱՂ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ
- 71 Գ.«ԾԱՂԻԿ» ԽՈՒՄԲ
1. ԲԱՆԱՒՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

2. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՒՆ ԵՐՋԱԿԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԵՏ.
ԸՆԿԵՐԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ
ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ
3. ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ,
ՅՈՒՋԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏԻՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ
4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
ԾԱՒԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՁԳՏՈՒՄԻ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԵՒ
ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ
ԶԱՐԳԱՑՈՒՄ
5. ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.
ԿԱՐԴԱԼՈՒ ԵՒ ԳՐԵԼՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ

110 ԾՐԱԳԻՐԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԻԷՏ
ԻՒՐԱՅՈՒՄԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՄԵԹՈՏՆԵՐ

“The Armenian Educator”

No. 5 - 2011

“The Armenian Educator”

A tri-monthly journal of education and pedagogy

“The Armenian Educator” (Hay Mangavarj) is devoted to the improvement of education and the professional development of educators in Armenian schools worldwide. The journal, published tri-monthly in Armenian, is a resource for teaching and learning and provides an opportunity for research publication, information about developments of significance to educators, and commentary on issues of concern to the Armenian educational community worldwide.

By the Order of

His Beatitude Nerses Bedros XIX

Catholicos Patriarch of Cilicia of Armenian Catholics

Editor in Chief

Father Vartan Kazanjian

Director

Vartan Tashjian

Board of editors:

Dr. Nazik Haroutyunian (*Professor, Head of Chair of Pedagogy, Yerevan State University*)

Dr. Ashod Melkonian (*Professor, Director of Institute of History, National Academy of Sciences of Armenia*)

Dr. Julieta Gulamirian (*Professor, Senior lecturer, Yerevan State University of Pedagogy*)

Dr. Lilit Arzoumanian (*literary critic*)

Published by

Office of Armenology Curriculum Development

“Saint Krikor Naregatsi” Center

Armenian Catholic Patriarchate

2078-5605 Geitawi Beirut-Lebanon

Tel: + 961 1 570559 - Fax: 961 1 570558

Email: nareg@armeniancatholic.org

www.armeniancatholic.org

Printed in Lebanon - 2013

Pomigravure Printing House



ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՄԱՆ ԳՐԱՄԵՆԱԿ